№ 105 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 18 ՄԱՅԻՍԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՒՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 18 ՄԱՅԻՍԻ № 105

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
7 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցեն, նոյնպէս և 40 կօպ. (կարելի է և նամակաղրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կօպ., վերջին երեսի վրա՝ 10 կօպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Ժողովարան
ԱՄԱՐԱՅԻՆ ԱՅԳԻ
Այսօր, երեքշաբթի, մայիսի 18-ին
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
երեկոյթին կը հնչեցնեն յարանուագ խումբը և սազանդարներ։
Պ Ա Ր Ե Ր
Եւրոպական և կովկասեան։
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են 1 ռուբլի։
563. 1—1

Բ Ա Ժ Ի Ն Ե Կ
Ա. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑ
Նախկին ասիստենտ Մոսկվայի Կայսեր. Համալս. հնախօսական կլինիկայի։ Կանայի հիւանդութիւններ և մանկաբարձութիւն։ Բժշկութեան ֆիզիկական մէթոդներ։ Ընդունելութիւնն ամեն օր՝ առ. ժամը 11—12. Բէրուսօվսկայա, 58. Մայիսի 20-ից ընդունում է ԷՍՄԵՆՏՈՒԿՈՒՄ (Главн. кур. д. Курмояровыхъ). Կիսլովոդսկում և Պեատիգորսկում (հասցէն տեղեկանալ գրաստպայի գրասենեակում)։
(օ. ժ.) (առ.) 469. 10—9

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Կրետական հարցը, մի շատ հին հարց, նորից հրապարակի վրա է։

Ինչի՞ մէջ է կայանում այդ հարցի էութիւնը։

Կրետէ պատմական կղզին, որի ազգաբնակութեան մեծամասնութիւնը յոյն տարրն է կազմում, դարերից ի վեր ձգտել է և ձգտում է անկախութեան և ազատման թիւրքական լծից և միացման՝ Յունաստանի հետ։

Նրա այդ ձգտումը շատ թանդ նստեց նրա վրա։ Մի քանի անգամ նա ենթարկվեց սոսկալի ջարդերի թիւրքական սուլթանների և ֆանատիկոս մահմեդական ամբոխի ձեռքով։ Վերջապէս սուլթան Աբդիւլ-Համիդի բռնապետութեան օրով, եւրոպական մեծ պետութիւնների շնորհիւ, Կրետէն կարողացաւ կիսանկախութիւն ձեռք բերել, տեղական ինքնավարութիւն, մի տեսակ աւտօնօմիա՝ օսմանեան գերիշխանութեան ներքոյ։ Բայց կրետական յոյն ժողովրդի իդէալն այդ չէ. նրա իդէալն է միանալ մայր-հայրենիքի՝ Յունաստանի հետ։ Այդ է և բոլոր յոյն հայրենասէրների ձգտումը, բայց երկիւղ՝ պատերազմի բռնվելու Թիւրքիայի հետ՝ ստիպում է Յունաստանին կրաւորական դիրք բռնել։ Եւրոպական մեծ պետութիւններից չորսը—Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ռուսաստան—որոնք հովանաւորողի դեր ստանձնեցին Կրետէի վերաբերմամբ և թոյլ չը տուին բռնակալ Աբդիւլ-Համիդին ստրկացնել կղզին, ստեղծելով նրա համար ինքնավարութիւն և պաշտպանելով երկար տարիներ այդ ինքնավարութիւնն իրանց զինեալ ոյժերով, խստութիւն տուին Կրետէին խոչընդոտ չը հանդիսանալ նրա միացմանը Յունաստանի հետ յարմար առիթով։ Բայց այդ խստութիւնը, որ մեծ յոյսեր ներշնչեց յոյն ժողովրդին, հովանաւորող պետութիւնները տուին այն ժամանակ, երբ Թիւրքիան համարվում էր մահամերձ, օրհասական։ Այն ժամանակ, սուլթան Աբդիւլ-Համիդի բռնակալութեան օրով, ամբողջ քաղաքական աշխարհը և դիպլոմատիան այն կարծիքի էին, որ վաղ թէ ուշ Թիւրքիան, իբրև քայքայվող մի պետութիւն, պէտք է կորցնի Կրետէն, ինչպէս կորցրեց այդ սուլթանի օրով մեծամեծ երկիրներ։

Բայց քաղաքական աշխարհը և դիպլոմատիան մի մեծ սխալ գործեցին. այն, որ կրետական հարցը, այն է՝ նրա միացումը Յունաստանի հետ, չը լուծեցին սուլթան Աբդիւլ-Համիդի օրով, այլ յետաձգեցին, սպասելով «հիւանդ մարդու» վախճանին։ Այն ժամանակ աւելի հեշտ էր կրետացիների ձգտմանը բաւարարութիւն տալ, քան այժմ։ Այժմ, «հիւանդ և մահամերձ մարդը» առողջացել է, ոտքի է կանգնել, վերածնութեան նշաններ է տալիս և, գիտակից իր ոյժին ու իրաւունքներին, յայտարարում է, թէ թոյլ չի տայ ջլատել իրան։ Վերածնված Թիւրքիան, որի ղեկավարներն են այսօր նացիոնալիստ «երիտասարդ Թիւրքերը», այլ ևս չէ կամենում հաշտվել նոր երկիրներ կորցնելու մտքի հետ և, յենվելով իր վերհապետական իրաւունքի վրա, պահանջում է յարգել այդ իրաւունքը՝ թողնելով Կրետէն Թիւրքիայի գերիշխանութեան ներքոյ, իբրև մի վասալ, բայց ինքնավար շրջան։

Այժմ մեծ պետութիւնները ստիպված են անտես չանել նոր Թիւրքիայի այդ պահանջը, հակառակ կրետացիներին տուած իրանց խոստման։

Կրետական հարցը նորից արծարծվեց այն առիթով, որ տեղի ունեցաւ ազգային ժողովի ընտրութիւն և ժողովը զբաղվեց Կրետէի կառավարութեան հարցով։ Ազգային ժողովի անդամների մէջ ընտրված են նաև 16 մուսուլման պատգամաւորներ, և երբ ազգային ժողովը իր առաջին նիստում հաւատարմութեան երդումն տուեց Յունաստանի թագաւոր Գէորգին, ինչպէս արել էր և 1908 թ., մուսուլման պատգամաւորները բողոքեցին և հեռացան։ Անմիջապէս թիւրքաց կառավարութիւնն ևս բողոք յայտնեց մեծ պետութիւններին ազգային ժողովի վարմունքի դէմ, և մեծ պետութիւնները շտապեցին պատասխանել, թէ թիւրքիայի վեհապետական իրաւունքներին կրետէի վրա՝ ոչ մի վտանգ չէ սպառնում։ Այդպիսի յայտարարութիւնից յետոյ մեծ պետութիւնները, ի հարկէ, ստիպված են ոչ մի պաշտպանութիւն ցոյց չը տալ կրետական ազգային ժողովի ձգտումներին։

Կրետէն կամեցաւ օգուտ քաղել Թիւրքիայի այժմեան նեղ դրութիւնից, որ ստեղծվել է նրա համար Ալբանիայի ապստամբութեամբ։ Բայց իրանք ալբանացիները նորերս պահանջեցին թիւրքաց կառավարութիւնից միջոցներ ձեռք առնել Թիւրքիայի վեհապետական իրաւունքների պաշտպանութեան համար, սպառնալով, հակառակ դէպքում, յարձակվել Յունաստանի վրա և զէնքը ձեռքին պաշտպանել օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը։

Որքան էլ Թիւրքիայի ձեռքերը կաշկանդված լինեն այժմ, բայց նացիոնալիստական ոգու բռնկումը այնքան զօրեղ է այժմ, որ նա չի վարանի պատերազմ սկսել Յունաստանի դէմ, Կրետէի պահպանութեան համար, թէև Թիւրքաց կառավարութիւնն այն ևս ի նկատի ունի, որ իրա Թիւրքիայի մէջ 4—6 միլիոն յոյներ են ապրում, ուստի ընդհարման դէպքում կարող են ներքին մեծ բարդութիւններ առաջ գալ։

Այդ ամենը տալիս է կրետական հարցին յուզիչ կերպարանք։ Բայց հաւանական է, որ մեծ պետութիւններն այս անգամ ևս գտնեն մի կօմպրոմիս և ժամանակաւորապէս հաստատեն անդորրութիւն։

Շատերի կարծիքով՝ միակ ելքն այն է, որ Յունաստանը դրամով գնէ Թիւրքիայից Կրետէ կղզին, որովհետև այդ կղզին երբէք չի հանդատանայ, մինչև որ չը հասնի իր իդէալին՝ միացման Յունաստանի հետ։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 15 մայիսի

Ցարսկոէ-Սէլօյի դամբարանում բաղդ ունեցան Կայսրին ներկայանալ համալսարանի, պոլիտեխնիկումի, ճան. հաղ., լեռնային և անտառային ինստիտուտների ուսանողների պատգամաւորութիւնները, թւով 60 հոգի, պալատի մինիստրի և պալատական հերթապահների ներկայութեամբ։ Կայսրը կրկնակի անցաւ ուսանողների միջով և դիմեց նրանց հետևեալ ողորմած խօսքերով.

«Ես շատ ուրախ եմ ձեզ տեսնելով, պաղբայրների և քոյրերի արտասուքների մէջ և որպիսի՜ արժանապատուութեամբ նա գիտակցում էր, թէ ուր է գնում և ինչու։

— Աշխատիր աղնուութեամբ, իմ թանգագին որդեակ, որպէսզի ծնողներիդ չամաչեցնես,—խրատում էր հայրը։

— Պահպանիր առողջութիւնդ. զգոյշ կաց վատ ընկերներից,—աղերսում էր մայրը։

— Ուրախ, երջանիկ եղիր,—կրկնում էին եղբայրները և քոյրերը։

Եւ նա խոր գիտակցութեամբ, որ միայն իր մէջ է կենտրոնացած տնեցիների ամբողջ կեանքը, քաղաք գնաց վարդագոյն յոյսերով, աղնիւ, քրտնաթոր աշխատանքի, որն և իրան վարձատրելու և ծնողներին ուրախացնելու է... Սակայն նա այժմ դատաստանի առաջ է։

Եւ որքան ուրախ անցան հինգ տարիներ։ Ինչպէս շաւտով նա գործ ճարեց, սկսեց աղնիւ աշխատանք։ Զէ՞ որ հայրը նրան պատուիրել էր աղնիւ աշխատել։ Նա սկսեց լաւ վաստակել, սկսեց ստանալ ծնողական նամակները լի երախտագիտութեամբ, օրհնութիւններով և ամենալաւ ցանկութիւններով։ Եւ նա աշխատում էր մեծ եռանդով, ապրում էր հաւեստ, վաստակածի մեծ մասը տուն էր ուղարկում, գիտենալով որ իրանց տնտեսութիւնը ծաղկում է։ Նոր կովեր և ձիեր աւելացրին, նոր հող առան, նոր տնակ շինեցին։ Դարձեալ երկու-երեք տարի, և նա տուն կը գնայ պսակվելու, երջանիկ և խաղաղ կապրի...

Իսկ նա այժմ դատաստանի առաջ է։

Միանգամայն դեղնած, նիհարած և հիւանդ՝ նա շղթայակապ կանգնած է դատաստանի առաջ և բուռ հայեացքով նայում է դատաւորներին։ Նա լսում է միայն իր անունը և ազգանունը և այլ ևս ոչինչ չէ հասկանում, թէ իր շուրջն ինչ է կատարվում։ Սպանելով իր զոհին՝ նա նրան կողոպտեց և թաղվեց։ Երեք օրից յետոյ նրան ճանաչեցին և բռնեցին։ Վկաները անժխտելի են։ Դատաւորի առարկած մի շարք մեղադրանքներին նա, իբրև համաձայնութեան նշան, շարժում է գլուխը։ Այո՛, այդ նա էր, որ, լսելով չարագործներին, մտադրվեց կողոպտել։ Այդ նա էր, որ աղնիւ աշխատանքը ուզում էր ոճրագործութեան փոխել՝ հեշտ հարստանալու նպատակով։ Այդ նա էր, որ սպանեց և թաղվեց։ Այդ նա էր, այո՛, նա՛, նա՛...

Մեղադրեալի խոստովանութիւնից յետոյ պաշտպանը և դատաւորները ստիպված չէին երկար զբաղվելու վկաների ցուցմունքներով և կարճ խորհրդակցութիւնից յետոյ դատաստանի վճռով նա պէտք է ենթարկվի 12 տարվայ տաժանակիր աշխատանքների։ Նա մի ինչ-որ անորոշ անզգայութեան մէջ լսեց իրան սպասող ծանր պատժի մասին և, զնդզնդացնելով շղթաները, վերադարձաւ բանտ։

Տաժանակիրների խումբը բանտում աւելացաւ նոր եկող մեղադրեալներով, և աքսորի օրն արդէն որոշված էր։

Նա նստած է իր խցում, և նրան թւում է, թէ երկարատև քնից սկսում է արթնանալ։ Նա յիշում է իր հայրենի տնակը, հօրը և նրա խրատական խօսքերը, մօրը, եղբայրներին և քոյրերին, նրանց հրաժեշտի ջերմ արցունքները, իր՝ քաղաք գալը, աղնիւ աշխատանքը։ Նա յիշում է, թէ որքան լաւ էր նա ապրում, ինչպէս խաղաղ. իսկ այժմ... Սակայն ի՞նչ պատահեց, ո՞վ նրան հրեց դէպի այդ սարսափելի քայլը։

Նա ամբողջովին բորբոքվեց. նրա մէջ զարթնեց նրա հին, աղնիւ և աշխատասէր «ես»ը և սկսեց հարուածել նրան՝ շղթայակապ ոճրագործին։ Ողճի խայթը, ներկայի սարսափը և մի ինչ-որ թանգագին անդառնալի կորուստը, այդ բոլորը զարթնեցին նրա մէջ, և այդ գաղտնի, բայց սարսափելի և տանջալի կու�ը նա կիսվեց։ Նա սկսեց զգալ իրան և անցեալում, և ներկայում. ջերմութիւնը խփեց գլխին, սիրտը սկսեց արագ բաբախել, ձեռքերը սկսեցին դողալ և աչքերը լցվեցին արտասուքով։ Նրա մէջ մի ակնթարթում զարթնեց նախկին աղնիւ և մաքուր աշխատաւորը, որ պահպանում էր ընտանիքի պատիւը և բարեկեցութիւնը, որպէսզի աւելի խիստ կերպով չարչարի նրան՝ ոճրագործին, որպէսզի աւելի խորը մեխի նրա անբուժելի վէրքի մէջ միանգամայն անմիտ և անբարոյական ոճիրը, որպէսզի ընդմիշտ այրի նրա մէջ տանջանքը, չարչարանքը, ողճի խայթը և այդ սարսափելի զարթումից յետոյ մի ակնթարթում մեռնի յաւիտեան...։ Եւ այդող արտասուքներն առաջին անգամ նրա կեանքում լցվեցին նրա արիւնաշաղախ աչքերում, և դրանք յուսահատութեան արտասուքներ էին, տանջանքի և անվերջ չարչարանքի արտասուքներ, իր մենակութիւնը և անօգնականութիւնը գիտակցելու արտասուքներ, և այս վերջինը աւելի ուժեղ էր այրում նրան։

Եւ նա երազում է հայրենի խաղաղ տնակը՝ պարտիզով շրջապատված. նա երազում է հօրը, մօրը, քոյրերին և եղբայրներին, նրանց խաղաղ և աղնիւ կեանքը... Իսկ ինքը շղթայակապ ուղեկցվում է հեռո՛, տաժանակիր աշխատանքների...։

Գրի-Գրէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋ

Նրանց խաղաղ տնակը շրջապատված է պարտէզով, որի միջով հոսում է կչկչան և սառն առուակը։ Նրանց սիրուն գաշտերը գարնան ծածկվում են զմրուխտանման կանաչով։ Նրանց օգտակար կովերը, եղները և ձիերը նրանց հետ վարժվել են դաշտային աշխատանքների։ Նրա հայրը մի բարի ծերուկ է, որ այնքան ընչաքութեամբ սիրում է մօրը. նա ունի և անգին եղբայրներ ու քոյրեր, որոնց քրտնաջան, ծանր, բայց աղնիւ աշխատանքը ոչ ոք չէ խանգարում։ Նրանց կեանքը խաղաղ է ու հանգիստ... սակայն ինքը դատաստանի առաջ։

Նա դեռ 16 տարեկան էր, երբ՝ աղնիւ, առողջ և կենսուրախ՝ թողեց հայրենի օջախը և ընկաւ մեծ քաղաք՝ գործ ճարելու համար։ Ծնողների ջերմ աղօթքները, եղբայրների և քոյրերի արտասուքները՝ մեծ եղբօր հրաժեշտի ժամին, այդ բոլորը նրան հարազատ էին, թանգ ու մտերիմ. և իրան ճանապարհ էին գցում, երբ ինքը գիւղից հեռանում էր։ Որքան քաղցր էին ծնողական աղօթքները, որչափ ջերմութիւն կար նրանց խաղաղ տնակը շրջապատված է պարտէզով, որի միջով հոսում է կչկչան և սառն առուակը։ Նրանց սիրուն գաշտերը գարնան ծածկվում են զմրուխտանման կանաչով։ Նրանց օգտակար կովերը, եղները և ձիերը նրանց հետ վարժվել են դաշտային աշխատանքների։ Նրա հայրը մի բարի ծերուկ է, որ այնքան ընչաքութեամբ սիրում է մօրը. նա ունի և անգին եղբայրներ ու քոյրեր, որոնց քրտնաջան, ծանր, բայց աղնիւ աշխատանքը ոչ ոք չէ խանգարում։ Նրանց կեանքը խաղաղ է ու հանգիստ... սակայն ինքը դատաստանի առաջ։

Նա դեռ 16 տարեկան էր, երբ՝ աղնիւ, առողջ և կենսուրախ՝ թողեց հայրենի օջախը և ընկաւ մեծ քաղաք՝ գործ ճարելու համար։ Ծնողների ջերմ աղօթքները, եղբայրների և քոյրերի արտասուքները՝ մեծ եղբօր հրաժեշտի ժամին, այդ բոլորը նրան հարազատ էին, թանգ ու մտերիմ. և իրան ճանապարհ էին գցում, երբ ինքը գիւղից հեռանում էր։ Որքան քաղցր էին ծնողական աղօթքները, որչափ ջերմութիւն կար

Բաթում, 15 մայիսի

Գիշերս անյայտ չարագործներ յարձակում գործեցին Բաթումի վառօդի պահեստների վրա։ Յարձակումը յետմղվեց։ Չարագործները փախան։
(Հ. Գ.)

—

Բագէն-Բադէն, 15 մայիսի

Վախճանվեց յայտնի բակտէրիօլոգ բժիշկ Կոխը։ (Հ. Գ.)

—

Բերլին, 15 մայիսի

Եկաւ իտալական արտաքին գործերի մինիստր Սան-Ջուլիանօն։

Կայսրը բժիշկների խորհուրդով մի քանի օր պէտք է՝ խնայէ իր հիւանդ ձեռքը. այդ պատճառով գահաժառանգ պրինցին պատուիրագրվեց ժամանակաւորապէս իր ստորագրութեամբ վաւերացնել կայսրի ցուցմունքները և ակտերը։

Սատաս-սեկրետար Ֆօն-Շէնը առաւօտեան այցելեց իտալական արտաքին գործերի մինիստր Սան-Ջուլիանօյին։ Յետոյ Սան-Ջուլիանօն այցելեց պետական կանցլերին, յետոյ Ֆօն-Շէնին։ (Հ. Գ.)

—

Բերլին, 16 մայիսի

Երէկ պրօֆէսօր Բիը բացեց կայսրի ձեռքի ուռոյցը։ Հիւանդութեան ընթացքը նորմալ է։

Իտալական արտաքին գործերի մինիստր Սան-Ջուլիանօն և դիւանապետ Սֆօրցան ներկայացան կայսրին։ Կայսրը խօսակցեց Սան-Ջուլիանօյի հետ առանձին։ Նոցին մեծութիւնների նախաճաշին հրաւիրված են Սան-Ջուլիանօն, Սֆօրցան, իտալական դեսպան Պանսան, կանցլերը, ստատս-սեկրէտար Ֆօն-Շէնը։ Սան-Ջուլիանօյին և Պանսային շնորհվեցին Կարմիր-Արծիւ մեծ խաչեր։ (Հ. Գ.)

—

Բուդապեշտ, 16 մայիսի

Ֆրանց-Յովսէփ կայսրը մեկնեց Բօսնիա Բիլեբրտի, Խեգերվարիի, Էրենտալի, Շէյնախի և Բուրիանի ուղեկցութեամբ։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 16 մայիսի

Քննելով կայսրի մեկնումը Բօսնիա և Հերցեգովինա, «Ֆրեմդէնբլատը» ասում է, որ այցելութիւնը ամրապնդում է անքակտելի կապը նոր պետական երկիրների և հին պետութեան միջև։ Աւստրօ-Ունգարիայի ցանկութիւնն է, որպէսզի Թիւրքիան հաշտվի եւրոպական պետութիւնների հետ։

«Ֆրեմդէնբլատը» խօսում է նաև եւրոպացիների միջամտութեան մասին ռուսական գործերին։ Լրագիրը խիստ կերպով յարձակվում է «Новое Время»-ի վրա՝ սրա Գալիցիայի և Բուկովինայի մասին յայտնած մտքերի առիթով։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 16 մայիսի

«Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէի» տեղեկութիւնների համաձայն, Գալիցիայից և Բուկովինայից զօրքեր են ուղարկված Ունգ։ Նոր կովեր և ձիեր աւելացրին, նոր հող առան, նոր տնակ շինեցին։ Դարձեալ երկու-երեք տարի, և նա տուն կը գնայ պսակվելու, երջանիկ և խաղաղ կապրի...

Իսկ նա այժմ դատաստանի առաջ է։

Միանգամայն դեղնած, նիհարած և հիւանդ՝ նա շղթայակապ կանգնած է դատաստանի առաջ և բուռ հայեացքով նայում է դատաւորներին։ Նա լսում է միայն իր անունը և ազգանունը և այլ ևս ոչինչ չէ հասկանում, թէ իր շուրջն ինչ է կատարվում։ Սպանելով իր զոհին՝ նա նրան կողոպտեց և թաղվեց։ Երեք օրից յետոյ նրան ճանաչեցին և բռնեցին։ Վկաները անժխտելի են։ Դատաւորի առարկած մի շարք մեղադրանքներին նա, իբրև համաձայնութեան նշան, շարժում է գլուխը։ Այո՛, այդ նա էր, որ, լսելով չարագործներին, մտադրվեց կողոպտել։ Այդ նա էր, որ աղնիւ աշխատանքը ուզում էր ոճրագործութեան փոխել՝ հեշտ հարստանալու նպատակով։ Այդ նա էր, որ սպանեց և թաղվեց։ Այդ նա էր, այո՛, նա՛, նա՛...

Մեղադրեալի խոստովանութիւնից յետոյ պաշտպանը և դատաւորները ստիպված չէին երկար զբաղվելու վկաների ցուցմունքներով և կարճ խորհրդակցութիւնից յետոյ դատաստանի վճռով նա պէտք է ենթարկվի 12 տարվայ տաժանակիր աշխատանքների։ Նա մի ինչ-որ անորոշ անզգայութեան մէջ լսեց իրան սպասող ծանր պատժի մասին և, զնդզնդացնելով շղթաները, վերադարձաւ բանտ։

Տաժանակիրների խումբը բանտում աւելացաւ նոր եկող մեղադրեալներով, և աքսորի օրն արդէն որոշված էր։

Նա նստած է իր խցում, և նրան թւում է, թէ երկարատև քնից սկսում է արթնանալ։ Նա յիշում է իր հայրենի տնակը, հօրը և նրա խրատական խօսքերը, մօրը, եղբայրներին և քոյրերին, նրանց հրաժեշտի ջերմ արցունքները, իր՝ քաղաք գալը, աղնիւ աշխատանքը։ Նա յիշում է, թէ որքան լաւ էր նա ապրում, ինչպէս խաղաղ. իսկ այժմ... Սակայն ի՞նչ պատահեց, ո՞վ նրան հրեց դէպի այդ սարսափելի քայլը։

Նա ամբողջովին բորբոքվեց. նրա մէջ զարթնեց նրա հին, աղնիւ և աշխատասէր «ես»ը և սկսեց հարուածել նրան՝ շղթայակապ ոճրագործին։ Ողճի խայթը, ներկայի սարսափը և մի ինչ-որ թանգագին անդառնալի կորուստը, այդ բոլորը զարթնեցին նրա մէջ, և այդ գաղտնի, բայց սարսափելի և տանջալի կուռը նա կիսվեց։ Նա սկսեց զգալ իրան և անցեալում, և ներկայում. ջերմութիւնը խփեց գլխին, սիրտը սկսեց արագ բաբախել, ձեռքերը սկսեցին դողալ և աչքերը լցվեցին արտասուքով։ Նրա մէջ մի ակնթարթում զարթնեց նախկին աղնիւ և մաքուր աշխատաւորը, որ պահպանում էր ընտանիքի պատիւը և բարեկեցութիւնը, որպէսզի աւելի խիստ կերպով չարչարի նրան՝ ոճրագործին, որպէսզի աւելի խորը մեխի նրա անբուժելի վէրքի մէջ միանգամայն անմիտ և անբարոյական ոճիրը, որպէսզի ընդմիշտ այրի նրա մէջ տանջանքը, չարչարանքը, ողճի խայթը և այդ սարսափելի զարթումից յետոյ մի ակնթարթում մեռնի յաւիտեան...։ Եւ այդող արտասուքներն առաջին անգամ նրա կեանքում լցվեցին նրա արիւնաշաղախ աչքերում, և դրանք յուսահատութեան արտասուքներ էին, տանջանքի և անվերջ չարչարանքի արտասուքներ, իր մենակութիւնը և անօգնականութիւնը գիտակցելու արտասուքներ, և այս վերջինը աւելի ուժեղ էր այրում նրան։

Եւ նա երազում է հայրենի խաղաղ տնակը՝ պարտիզով շրջապատված. նա երազում է հօրը, մօրը, քոյրերին և եղբայրներին, նրանց խաղաղ և աղնիւ կեանքը... Իսկ ինքը շղթայակապ ուղեկցվում է հեռո՛, տաժանակիր աշխատանքների...։

Գրի-Գրէ

գարիայի զանազան տեղերը առաջիկայ ընտրութիւնների առիթով։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 16 մայիսի

Հաւասին հաղորդում են Ալժիրից, որ ֆրանսիական զօրամասերը, որոնք արշաւել էին Լիւդօրի հետ, կրակեցին և կործանեցին Կաբուլաղ-կադու տեղը, ուր թագնվել է մի անհնազանդ ցեղ։ Տեղացիները կորցրին շատ սպանվածներ. ֆրանսիացիները կորուստ չունեցան։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 16 մայիսի

Ի յիշատակ կօմմունայի զոհերի սոցիալիստների կազմած ցոյցը Պերլաշէզ գերեզմանատանը հանդիստ անցաւ։ Պատգամաւոր Վալիանը արտասանեց մի քանի խօսքեր, որոնք ընդունվեցին «կեցցէ կօմմունան» բացականչութիւններով։ Ոստիկանապետը կանգնեցրեց հուեստօրին։ Ուրիշ միջադէպեր չեղան։ (Հ. Գ.)

—

Բլիւֆիլդս (Նիկարագուա), 15 մայիսի

Մադրիսի նախագահի զօրքերը ջարդեցին ուրբաթ առաւօտը թշնամիներին և Բլիւֆիլդս քաղաքը վերցրին։ Կարծում են, որ յեղափոխութիւնը Նիկարագուայում վերջացաւ։ (Հ. Գ.)

ԹԻՒՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս, 15 մայիս

Պատգամաւորների պալատ։ Քննվում է արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւը։ Կարդացվում է 50 հեռագիր, ի թիւս որոց կրետացի մահմէդականներինը, որով բողոք է յայտնված կրետական հարցի դանդաղ լուծման դէմ։ Նիստին ներկայ էին վէզիրը և ներքին գործերի մինիստրը։ Շատ հռետորներ պահանջում են վրճռական պատերազմական միջոցներ ձեռք առնել Յունաստանի դէմ, իբրև կրետական խռովութեան պատճառի։ Վէզիր Հակկը փաշան, պատասխանելով հարցապնդումներին, յայտնում է, որ հովանաւորող պետութիւնները պաշտպանում են Թիւրքիայի գերիշխանութիւնը կրետական հարցում և ներկայումս բանակցութիւններ են վարում կրետական աւտոնոմիայի մասին սուլթանի գերագոյն իրաւունքները պահպանելու պայմանով։ Վերջում վէզիրը յայտնում է, որ կաբինէտը թոյլ չի տայ, որ կղզին մի երրորդ պետութիւն գրաւէ։ Պալատը վստահութիւն է յայտնում կաբինէտին։ Այդօրինակ յայտարարութիւն վէզիրը արաւ նաև սենատում, որը նոյնպէս վստահութիւն յայտնեց կաբինէտին։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 15 մայիսի

Դրութիւնը Ալբանիայում անփոփոխ է։ Նոր կռիւներ չեղան։ Իշխանութիւնները շարունակում են խլել զէնքերը քաղաքների և գիւղերի բնակիչներից. զօրքերը ոսոք չեն դրել լեռները։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 15 մայիսի

Ըէյտերը հաղորդում է, որ Իտալիան հաւանեց Գրէյի առաջարկութիւնը Պիշօնին կրետական հարցի մասին։ Հովանաւորող պետութիւնները ձգտում են հնարաւորութիւն տալ մահմէդականներին՝ մասնակցելու ազգային ժողովին և ցանկանում են վերականգնել 1908 թւի status quo-ն, նշանակելով Զայմիսին վերատին գերագոյն կոմիսար։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 14 մայիսի

Հաւասը հաղորդում է, որ կաբինէտի անդամները համաձայնութեան եկան պալատին ներկայացվելիք ծրագրի վերաբերութեամբ։

Ռիֆատ փաշան «Ֆիգարոյի» թղթակցին յայտնեց, որ Թիւրքիան համաձայն է Կրետէի ինքնավարութեանը և այն կէտին, որ սուլթանը մեծ պետութիւնների համաձայնութեամբ նշանակէ թիւրքահպատակ քրիստոնեայ նահանգապետ։ Մահմեդականների կրօնական, քաղաքացիական և քաղաքական իրաւունքները և սուլթանի գերիշխանութիւնը պէտք է անպայման ճանաչվեն։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 16 մայիսի

Մայիսի 14-ից կանգ առած պատերազմական գործողութիւնները կապ ունեն ապստամբների հետ տեղի ունեցող բանակցութիւնների հետ, որոնք վերջանում են ըստ երևոյթին աջողութեամբ։ Հաշտութեան պայմանները առայժմ յայտնի չեն։ Երէկ դէպի Դիակօվօ մեկնեցին զլխաւոր այժերը զինուորական մինիստրի և գլխաւոր շտաբի հետ միասին։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 16 մայիսի

Սկսվեց ցուլամարտի հանդէսների շաբաթը, որ առաջին անգամ թոյլ տրվեց Բարսելօնայի տօրէադօրներին այն պայմանով, որ ցուլերին չը սպանեն։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թէհրան, 16 մայիսի

«Իրանը-Նօոյ» լրագիրը անտես անելով դրված արգելքը՝ դուրս եկաւ առաջնորդող յօդուածով, որով Սիպէհդարի կաբինէտը անուանում է մաժուլի թշնամի, մեղադրում է նրան այնպիսի յանցանքի մէջ, որ անգամ գահընկէց շահը չէր գործի։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 15 մայիսի

Գեներալ-նահանգապետը չը կատարեց իր խոստումը և չը պատժեց ռուսաց գեներալ-հիւպատոսարանի աւագ միրզայի տանիքը բարձրացածներին։ Մայիսի 14-ի գիշերը անյայտ մարդիկ երկրորդ անգամ յարձակվեցին միրզայի տան վրա Դավաչի թաղում։ Կրակեցին մի քանի անգամ, որոնց ձայներին ոչ մի ոստիկան օգնութեան չեկաւ։ Դէպքի տեղն անմիջապէս եկաւ գեներալ-հիւպատոսարանի քարտուղարը 30 կազակներով։ Կատարվում է քննութիւն։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 9 մայիս

Ընդհ. ժողովը իր նիստը գումարեց երկու օր առաջ։ Կանխաւ եղած ազդարարութեան մը համեմատ, ոչ միայն դռնփակ էր ժողովը, այլ և ամէն միջոց ձեռք առնուած էր, որ դուրսէն և ոչ մէկ անհատ իսկ կարենայ դռնուիլ սբ. Լուսաւորիչ եկեղեցիին բակին մէջ։

Հակառակ որ մեծամասնութեան հարցը օրակարգի մէջ է, այդ օրը պէտք չտեսնուեցաւ ատով զբաղելու, որովհետև երեսփոխանները փութացած էին իրենց պարտքերը կատարելու, եթէ ներելի է ըսել պարտքեր կը կատարուին մեր ընդհ. ժողովի մէջ։

Կարգ մը երեսփոխաններու հրաժարագիրները դիւանի վրայ էին. ատոնցմով բողոք կը բարձուէր, թէ իրենք ալ յանձն չեն առներ ընդհանուր ժողովի երթալու՝ խըռնող ամբոխէն ծեծ ու նախատինք ուտելու համար։ Ժողովը ցաւ յայտնելով մերժեց հրաժարականները։

Դիւանի երկրորդ հարցն եղաւ, կարգ մը բողոքներու վրայ, ճշդել, թէ իրաւ է, որ նախորդ ժողովը ճնշումի ներքև տուած էր իր քուէն ի նպաստ եկեղեցիներու բաց շարունակութեան ժողովրդային գումարումներ առնլ։ Առարկողներ եղան, թէ անպատուաբեր է ժողովին ընդունել, թէ ճնշումի ներքև համակերպած են բողոքող երեսփոխաններ։ Ստոյգ է, թէ եկեղեցիին բակին մէջ «Բիւզանդիոնի» խմբագիրն ծեծ կերած էր և հինգ վեց երեսփոխաններ ալ հայհոյուներու և սուլումի առարկայ եղած, բայց և այնպէս ժողովը, հինգ ժամ տևողութեանը մէջ, խաղաղօրէն զբաղեցաւ. ու բողոքող երեսփոխանները իրենք էին մեծ մասամբ, որ գիւանին ժամուցուած հինգ բանաձևներու մասին բարեփոխութիւններ առաջարկելով՝ մէկ բանաձևի մը յանգեցան, որ էր՝ եկեղեցիներու մէջ ժողովրդային գումարումները չարգիլել, պայմանաւ որ քաղաքական հանգամանք չունենան ատենախօսութիւնները, կրօնքի դէմ ոչինչ չխօսուի։ Ու ըստ այնմ հրահանգ տրուեցաւ, որ վարչութիւնը ծրագիր մը պատրաստէ։ Այդ թոյլատրութիւնը պիտի տեւէր մինչև այն ատեն։ Երբ ազգը դիւրութիւն կունենար գալիքին մէջ յատուկ շէնքեր պատրաստելու։

Ատոր հակառակ, բողոքողներու կողմէն ըսուեցաւ, թէ «մենք պօլսեցի ենք, վախկոտ ենք, եղած ցոյցերը մեզի տպաւորիչ էին, ժողովին մէջ ալ գիտողութիւն չըրինք այդ մասին»։

Պատասխան տրուեցաւ, որ եթէ բակին մէջ անցած, իրենց ըսածին նայելով, 30—40 հոգիներու սուլումն և հայհոյէը քանի մը երեսփոխաններու դէմ՝ կրցած էին այդքան տարբերիչ ըլլալ, այնպէս որ արիաբար կը խոստովանին այսօր, թէ ճնշումի ներքև համակերպած էին, ինչ պիտի ընէ հայոց գերագոյն ժողովը, եթէ իրաւունք գտնուի լուրջ վտանգի մը առջև։ Կերևի թէ այն ատեն տեղի կուտայ ամէն պահանջումի առջև։ Եւ տակաւին այդ կարգի խօսքեր։

Այդ վիճաբանութեան շարքին մէջ, դիւանի դէմ ակնարկութիւններ եղան, որ իբրև թէ ուշադրութիւն ըրած չէր քուէարկութեան, նկատի առած չէր գրաւոր առաջարկութիւններ։

Ատենապետը, Հրանտ Ասատուր, ուզելով իբրև երեսփոխան պատասխանել այդ առարկութեանց, հակառակ եղած պնդումներու, վար իջաւ աթոռէն։

Պարիրաը սրբազանի առաջարկութեանը վրայ, ժողովը գաղտնի քուէարկութիւնով Ա. ատենապետ ընտրեց Դաբրիէլ Նորատունկեան, որ, շնորհակալութիւն յայտնելով, յանձն առաւ առաջարկուած պաշտօնը և խոստացաւ ծառայել ազգին իր փափագներու և ունեցած տրամադրելի ժամանակին համեմատ ու բարձրացաւ աթոռ ծափերու մէջ։

Ճնշումի հարցը, դէմ ու թեր վիճաբանութիւններէ ետքը, քուէի դրուեցաւ։ Հակառակ կողմը առաջարկեց, որ անուանական քուէով վճռուի հարցը. միւսները ընդդիմացան ու այո և ոչ թղթիկներով 23-ի դէմ 29 ձայնով ընդունուեցաւ, թէ նախորդ նիստի որոշումը տրուած էր ճնշումի տակ։

Կաթողիկոսական կոնդակը որ եկած էր արգիլելու եկեղեցիներու մուտքը քաղաքական միտինգներու առջև, պատճառ տուած է հակամիտինգեաններու՝ օգտուիլ ատկէ ու բացարձակ վճռով մը փակել, ոևիցէ գումարումի առջև, եկեղեցիներուն դուռները։ Հարցուց եղաւ թէ՝ քանի որ վարչութեան կողմէ կոնդակը բերուած էր ժողովին, պէտք է օրակարգ անցնել թէ՞ ոչ։ Պատրիարքը առարկեց, թէ ինք թոյլ չէր տար, որ հայրապետական կոնդակը վէճի նիւթ ըլլար, ու մեկնեց, թէ ինչ ըսել ուզած է Հայրապետը այդ կոնդակով։

Երկու բանաձև քուէարկութեան առաջարկուեցաւ։ Առաջինը կըսէր. կոնդակը դարձնել վարչութեան ի գործադրութիւն, այսինքն եկեղեցիներուն մուտքը արգիլել ոևիցէ գումարումի առջև։ Երկրորդը կառաջարկէր. վարչութեան զրկել զայն՝ իր տեղեկագիրը բերելու։

Ամիս մըն է, որ այս հարցով կը զբաղին Պօլսի և Կովկասեան հայ թերթերը. իրարու դէմ գնդակներ կը նետուին, թուք, մուր, նախատինք, իբրև թէ ալ ոչինչ ուսնեցած ըլլար ազգը։ Այս, ճիշդ է. ոչ մէկ ցաւ չունինք. հոգային հարցը Մուշի մէջ սպառնալից կերպարանք կառնէ հայերու և քիւրդերու միջև. սպանութեանց ձայներ կը հասնին արդէն. մեր կարիճ սասունցիները յարդը ալիւրի վերածելով՝ հաց կը շինեն. Կիլիկիոյ մէջ ուրիշ հայաքաղաք մը, Սասունի չափ կարևոր, Ալբիստան, որ կըսուի թէ Զէյթունի ոգին է, սովէն կը չարչարուի։ Եւ ահա այդ առեն է, որ հայութեան երկու գլխաւոր կեդրոններ անտես առած են երկրի էական խնդիրները։

Շահէն

Հալէպի գիտաւորը՝ երկու օր է որ կեսրևի իր փառքովը, հեռուն, բարձրութեան մէջ, գիշերուան առաջին պահուն։ Աբդիւլ Համիդը, նոր սարսափներու մատնուած, գիտաւորի վախէն օրերով ոչ քնացած է և ոչ բերանը բան մը դրած։ Նոյն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

Ինչպէս յայտնեցինք անցեալ անգամ, շաբաթ երեկոյեան, մայիսի 15-ին, «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան դահլիճում կայացաւ երկրորդ խորհրդակցական ժողով, մասնակցութեամբ բազմաթիւ ծխականների Թիֆլիսի զանազան եկեղեցիներից։ Ներկայ էին մօտ 50 անձինք, որոնք ընտրեցին ժողովի նախագահ Հ. Առաքելեանին և քարտուղար Յ. Գասպարեանին։

Բանալով նիստը, նախագահը ասաց մօտաւորապէս հետևեալը.

Ձեզ յայտնի է, որ Ներսիսեան դպրոցի համար պէտք է ընտրվին նոր 6 հոգաբարձուներ։ Այս մայիսի 23-ին նշանակված է պատուիրակների ընտրութիւն։ Այդ պատուիրակները բացի Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներից՝ պէտք է ընտրեն և թեմական խորհրդի անդամներ, ինչպէս երևում է առաջնորդի մի լրացուցիչ գրութիւնից։ Բայց հայ ժողովրդի ուշադրութիւնը ներկայումս գրաւում է Ներսիսեան դպրոցը։ Մենք գիտենք, որ մեր ազգային կրթական այդ առաջնակարգ հաստատութիւնը վերջին տարիներս ընկաւ մի խումբ մարդկանց ձեռք, որոնք սկզբում հանդէս եկան մեծամեծ խոստումներով, ամենաարմատական ֆօրմուլներով, բայց հէնց որ ընտրվեցին, մոռացան այդ ամենը և մի այնպիսի գործելակերպ ընդունեցին և գործունէութիւն ցոյց տուին, որ հասցրին Ներսիսեան դպրոցը նիւթական քայքայման, բարոյական և մտաւոր անկումի ու պատճառ դարձան, որ հայ ժողովուրդը կորցրեց իր հաւատը և վստահութիւնը, որ ունէր դէպի ազգային այդ կարևոր կրթական հաստատութիւնը։ Իբրև ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ մի քանի հարուստներ, որոնք կտակել էին խոշոր գումարներ Ներսիսեան դպրոցին, քանդեցին իրանց կտակները և գումարները նուիրեցին այլ, ոչ-ազգային հաստատութիւնների։ Թայֆայական հոգաբարձութեան առաջին երկու տարվայ գործունէութիւնը բաւական եղաւ բանալու հայ ժողովրդի աչքը, ուստի երբ 2 տարին լրանալով՝ 1908 թ. նշանակվեց 6 հոգաբարձուների նոր ընտրութիւն, հայ ժողովուրդը, արդէն գիտակից՝ որ իր փարախի մէջ բաց է թողել գիշատիչ գայլերը, պատրաստվեց դուրս նետել նրանց և ազատել դպրոցը սրանց շահագործութիւններից, բայց տեղապահի արած մի ապօրէն կարգադրութիւնը թոյլ չը տուեց ժողովրդին կատարել նոր պատուիրակների ընտրութիւն և իր ձայնը լսելի անել։ Այս տարի միայն ժողովուրդը կոչվում է նոր պատուիրակների ընտրութիւն կատարելու, ուստի և հայ առաջադիմական բանակի մի ստուար խումբ, բաղկացած «Մշակի» համակրողներից և առաջադիմական այլ հոսանքների ներկայացուցիչներից, որոշեց եռանդուն մասնակցութիւն ունենալ, որպէսզի կարելի լինի նոր արժանաւոր և լուրջ հոգաբարձուների ընտրութեամբ վերահաստատել Ներսիսեան դպրոցի ունեցած նախկին կացութիւնը և ժողովրդի հաւատն ու վստահութիւնը դէպի նա։

Ապա նախագահը յայտնեց, որ թայֆայականները սկսել են նոյնպէս կազմակերպվել և զանազան դիմակների տակ աշխատում են ընտրութիւնները իրանց նպաստաւոր դարձնել։

Խորհրդակցական ժողովը երկար կանգ առաւ Ներսիսեան դպրոցի այժմեան անկեալ վիճակի վրա։ Հետզհետէ խօսեցին մի քանի անձինք՝ Արամ Նազարէթեան, Յ. Մելիք-Բախտամեան, Եղ. Իսահակեան, Յ. Գասպարեան, Ս. Մալխասեան, Բ. Բարսամեան և այլք՝ որոնք բացատրեցին գլխաւոր պատճառները, առաջ բերելով Ներսիսեան դպրոցի մէջ վերջին ժամանակներս երևացած ցաւալի երևոյթները — աշակերտների լեռամեցութիւն ուսման մէջ, նիւթական քայքայումն և այլն։

Ժողովականներից շատերը կամեցան իմանալ, թէ որ 6 հոգաբարձուների տեղ պէտք է նորերն ընտրել և որ 6-ը մնում են հոգաբարձու։

Նախագահի հաղորդած տեղեկութիւններից երևաց, որ պէտք է 6 նոր հոգաբարձուներ ընտրել հետևեալ անձանց տեղ, որոնց պաշտօնավարութեան շրջանը լրացել է, կամ որոնք բացակայ գտնվելով՝ գադարել են հոգաբարձու լինելուց։ Դրանք են՝ Եղիշէ Թոփչեան (մեռած), բժ. Մուրադեան, Ս. Մանասեան, Յ. Բոչարեան, Աւ. Սահակեան և Յ. Աւիրխանեան։

Մնացողներն են՝ Յ. Խունունց, Գ. Կաֆեան, Լ. Տիգրանեան, Ն. Կաճկաճեան, Ա. Պապովեան և բժ. Իգիթեան։

Խորհրդակցական ժողովը վերջնականապէս մշակեց Թիֆլիսի 23 եկեղեցիների պատուիրակների կանդիդատների ցուցակը։

Առաջադիմական բանակի խորհրդակցական ժողովը յոյս ունի, որ հայ ժողովուրդը այս անգամ կը կարողանայ այլևս չը խաբվել և ամէն կերպ կաշխատէ թոյլ չը տալ թէ Թիֆլիսում և թէ դաւառներում, որ թայֆայականները և նեղ-կուսակցական շահագործողները նորից իրանց ձեռքը ձգեն Ներսիսեան դպրոցի վրայ։

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, մայիսի 16-ին կայացաւ հայոց Դրամատիկական Ընկերութեան ժողովը։ Ժողովը բաւական բազմամարդ էր, եթէ ի նկատի ունենանք և կողմնակի հանդիսականների թիւը։

Ժողովի քննութեանը ենթարկվեցին. 1) ընկերութեան 1909/10 թւի հաշիւը։ Ընկերութիւնը առ 1-ն մայիսի 1910 թ. վերջին ունի 8129 ր. 12 կ. (սրա մէջ և նախորդ տարիների ծախսածները և պարտքերը)։ Հաշուետու տարվայ մէջ մուտք ունեցել է ընդամենը 4027 ր. 89 կ. (որի մէջ և 600 ր. պարտք վերցված) և ծախք 3816 ր. 76 կ., մնացորդ առ 1-ն մայիսի 211 ր. 22 կ.։ Ներկայացումներ տուել է 1909 թ. հոկտ. 12-ից մինչև 1910 թ. փետրվարի 25-ը ընդամենը 21 անգամ։ Այդ հաշուի քննութիւնը կատարող վերատուգող յանձնաժողովը իր զեկուցման մէջ բաւական ծանր մեղադրանքներ էր բարդել վարչութեան վրա, որի տուած բացատրութիւնները չը կարողացան գոհացնել ժողովականներից շատերին։ Սակայն մի հանգամանք ժողովի ընթացքում նպաստեց դէպի վարչութիւնը ստեղծված վատ տրամադրութեան չքանալու և աւելի բարեհաճ վերաբերմունքին դէպի նա։ Երբ քննվում էր առաջիկայ 1910/11 սեզօնի գործունէութեան նախահաշիւը, կազմված՝ 13,300 ր. մուտք և ծախքով, երբ ժողովականները մուտքի մի քանի կէտերը, օրինակ՝ Թիֆլիսի ժողովարանից սպասվող 1000 ր. նը-պաստը, անիրագործելի էին գտնում և առաջարկում կրճատել մուտքը, ժողովականներից մէկը՝ Արշակ Միլեան՝ վեր կենալով յայտնեց, որ ինքը նուիրում է 5 տարվայ ընթացքում տարեկան 1000 ռուբլի հայ թատրոնի գոյութեան համար։ Այս յայտարարութիւնը բուռն ծափահարութիւններ առաջ բերեց, հանդերձ մեծ շնորհակալութիւններով նուիրատուին, և նախագահը նոյնիսկ այնքան առաջ գնաց, որ հէնց նոյն րոպէին քուէարկութեան դրեց տիկին Մայսուրեանի առաջարկը՝ ընտրել հէնց այժմ Միլեանին ընկերութեան պատուաւոր անդամ։ Զեկան կողմից դա անկանոն էր, որովհետև զբաղմունքների օրակարգի մէջ այդպիսի հարց չը կար, թէև, ի հարկէ, ժողովը հաճութեամբ կընդունէր և ապագայում այդ առաջարկը։ Երկրորդ հանգամանքը, որ լաւ տրամադրութիւն ստեղծեց ժողովի մէջ, տիկին Մամուլեանի յայտարարութիւնն էր։

Բագուի հայոց թատրոնական կոմիտեն, ուղարկելով Դրամատիկական Ընկ. վարչութեան 600 ր. դրամ, յայտնել է, թէ այդ գումարով պէտք է հաստատվի ֆոնդ կարօտ դերասաններին օգնելու համար նրանց ծերութեան կամ անկարողութեան հասակում, և դրա հետ ուղարկել է նաև մի մշակված ծրագիր, խնդրելով որ վարչութիւնը հոգ տանէ աճեցնել այդ գումարը և ապա գործադրել համաձայն ծրագրի։ Ժողովականներից մի քանիսը կարծիք յայտնեցին, թէ քանի որ ընկերութիւնը ուրիշ հոգսեր ունի և դժուար է իրագործել այդ ծրագիրը, աւելի լաւ է վերադարձնել գումարը, սակայն Ալ. Քալանթար առաջարկեց մերժել այդ կարծիքը և ընդունել թէ գումարը և թէ ծրագիրը և դրանով հիմք դնել մի գեղեցիկ և համակրելի գործի, որ է՝ օգնել կարօտ դերասաններին։ Գուցէ կը գտնվին ազգայում և հասակրողներ, որոնք կը նուիրեն նոր գումարներ այդ ֆոնդի համար և այդպիսով գործը ինքն ըստ ինքեան կը զարգանայ, ասաց նա։ Իբրև արձագանք այդ կարծիքի, տիկին Մամուլեան յայտնեց, որ ինքն նուիրում է 200 ր. այդ ֆոնդի համար։ Այս յայտարարութիւնը ընդունվեց բուռն ծափահարութիւններով և շնորհակալութեամբ։

Գալով նախահաշուին, ժողովը հաստատեց նրա մուտքի մասը, որ էր 13,300 ր., աւելացնելով և Միլեանի նուիրած 1000 ր., ուրեմն 14,300 ր., իսկ ելքի մասը չը հաստատեց, այլ յետաձգեց յաջորդ ժողովին։ Պէտք է ասել, որ բացի վարչութեան առաջարկած նախահաշուից և գործունէութեան ծրագրից՝ առաջիկայ սեզօնի համար ծրագիրներ ներկայացրել էին և դերասաններ Յ. Աբէլեան, Սևուսեան և Միք. Զաբար։ Որովհետև այդ ծրագիրները գործունէութեան տարբեր եղանակների մասին էին խօսում և նրանց մասին վարչութիւնը գրաւոր կարծիք չէր յայտնել, ուստի ժողովը ընտրեց 7 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որ վարչութեան հետ միասին քննէ այդ ծրագիրները և իր վերջնական եզրակացութիւնը ներկայացնէ յաջորդ ընդհանուր ժողովին, որ գումարվելու է երկու շաբաթից յետոյ։

Այդ ժողովին յետաձգվեցին նաև ընտրութիւնները։

Ապա ժողովը անցաւ Շիրվանզադէի յօբելեանին մասնակցելու հարցի քննութեանը։ Վարչութիւնը խնդրում էր ընդհանուր ժողովին՝ որոշել թէ ինչ տեսակ մասնակցութիւն ունենալ Շիրվանզադէի յօբելեանին, որի տօնախմբութեան հարցը հրապարակի վրա է դրված։ Ժողովը որոշեց, որ Դրամատիկական Ընկերութիւնն ինքը նախաձեռնութիւն յանձն առնէ կազմակերպել Շիրվանզադէի յօբելեանը, քանի որ Շիրվանզադէն մեր աչքի ընկնող դրամատուրգներից մին է։

ՀՈՂԻ ՇՈՒՐՋԸ

(ճանապարհորդական յուշեր)

I

Ազատ և հայերէն գիտցող գիւղատնտեսների սով է, մանաւանդ հմուտ, ժողովրդի հետ խօսել, նրան հասկանալ և հասկացնել կարողացող գիւղատնտեսների։

Մի օր գիւղատնտես ընկերներով մի ցուցակ կազմեցինք։

— Ապա հաշուենք քանի՞ գիւղատնտես ունենք։

Սկսեցինք անուններ տալ։

— Խօջայեան՝ բանկի կառավարիչ Բագուում։

— Վերմիշեան Խրիստաֆոր՝ «Baku» թերթի խմբագիր, նաւթային աշխարհի գործիչ։

— Պարոնեան Լեոն՝ նաւթային գործիչ Բագուում։

— Սերեբրեակեան Ալէքսանդր՝ փայտավաճառ Բագուում։

— Խանդեան Արամ՝ նաւթային գործիչ։

— Փիրալեան Յարութիւն՝ տնայնագործական կոմիտէի գործավար։

— Բաշինջաղեան Սարգիս՝ ուսուցիչ Բագուում և ամարային ինստրուկտոր։

— Զաւարեան Սիմէոն՝ Մուշի դպրոցների տեսուչ։

Եւ այսպէս հաշուեցինք 40—50 անուն, բոլորն էլ գիւղատնտեսներ, անտառապահներ, պետօվցիներ, բայց բոլորն էլ մեր երկրի գիւղատնտեսութիւնից հեռու, մեծ մասամբ Բագուում զանազան պաշտօնների կոչած, միւս մասը պետական պաշտօնների մէջ входящій и исходящій թղթեր գրողներ...

Իսկ այնտեղ՝ տեղումը, երկրի մէջ։

Հաշուեցինք, հաշուեցինք, ոչ մի անուն չը գտանք. գտածներս էլ կասկածելի ապագայ ունէին։

Գիտէինք՝ որ մի մահանի են սպասում, որպէսզի թողնեն գիւղն ու հողը և քաղաք փախչեն...

Ահա թէ ինչու այսօր, երբ գիւղատնտեսների այնպիսի պահանջ կայ՝ հրապարակում գիւղատնտես չը կայ։

Բագուի Կուլտուրական Միութիւնը, Թիֆլիսի Հայ Գիւղ. և Տնայնագ. Ընկերութիւնը երեք-չորս ամիս շարունակ գիւղատնտեսական կուրսեր, մեր երկրի ուսումնասիրութիւն, մեքենաների մրցութիւններ, այգիների, ծառերի բժշկութիւն, ցուցադրումներ և այլն և այլն։

յանգեցին զանազան տեղերը առաջիկայ ընտրութիւնների առիթով։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 16 մայիսի

Հաւասին հաղորդում են Ալժիրից, որ ֆրանսիական զօրամասերը, որոնք արշաւել էին Լիւդօրի հետ, կրակեցին և կործանեցին Կաբուլաղ-կադու տեղը, ուր թագնվել է մի անհնազանդ ցեղ։ Տեղացիները կորցրին շատ սպանվածներ. ֆրանսիացիները կորուստ չունեցան։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 16 մայիսի

Ի յիշատակ կօմմունայի զոհերի սոցիալիստների կազմած ցոյցը Պերլաշէզ գերեզմանատանը հանդիստ անցաւ։ Պատգամաւոր Վալիանը արտասանեց մի քանի խօսքեր, որոնք ընդունվեցին «կեցցէ կօմմունան» բացականչութիւններով։ Ոստիկանապետը կանգնեցրեց հուեստօրին։ Ուրիշ միջադէպեր չեղան։ (Հ. Գ.)

—

Բլիւֆիլդս (Նիկարագուա), 15 մայիսի

Մադրիսի նախագահի զօրքերը ջարդեցին ուրբաթ առաւօտը թշնամիներին և Բլիւֆիլդս քաղաքը վերցրին։ Կարծում են, որ յեղափոխութիւնը Նիկարագուայում վերջացաւ։ (Հ. Գ.)

ԹԻՒՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս, 15 մայիս

Պատգամաւորների պալատ։ Քննվում է արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւը։ Կարդացվում է 50 հեռագիր, ի թիւս որոց կրետացի մահմէդականներինը, որով բողոք է յայտնված կրետական հարցի դանդաղ լուծման դէմ։ Նիստին ներկայ էին վէզիրը և ներքին գործերի մինիստրը։ Շատ հռետորներ պահանջում են վրճռական պատերազմական միջոցներ ձեռք առնել Յունաստանի դէմ, իբրև կրետական խռովութեան պատճառի։ Վէզիր Հակկը փաշան, պատասխանելով հարցապնդումներին, յայտնում է, որ հովանաւորող պետութիւնները պաշտպանում են Թիւրքիայի գերիշխանութիւնը կրետական հարցում և ներկայումս բանակցութիւններ են վարում կրետական աւտոնոմիայի մասին սուլթանի գերագոյն իրաւունքները պահպանելու պայմանով։ Վերջում վէզիրը յայտնում է, որ կաբինէտը թոյլ չի տայ, որ կղզին մի երրորդ պետութիւն գրաւէ։ Պալատը վստահութիւն է յայտնում կաբինէտին։ Այդօրինակ յայտարարութիւն վէզիրը արաւ նաև սենատում, որը նոյնպէս վստահութիւն յայտնեց կաբինէտին։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 15 մայիսի

Դրութիւնը Ալբանիայում անփոփոխ է։ Նոր կռիւներ չեղան։ Իշխանութիւնները շարունակում են խլել զէնքերը քաղաքների և գիւղերի բնակիչներից. զօրքերը ոսոք չեն դրել լեռները։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 15 մայիսի

Ըէյտերը հաղորդում է, որ Իտալիան հաւանեց Գրէյի առաջարկութիւնը Պիշօնին կրետական հարցի մասին։ Հովանաւորող պետութիւնները ձգտում են հնարաւորութիւն տալ մահմէդականներին՝ մասնակցելու ազգային ժողովին և ցանկանում են վերականգնել 1908 թւի status quo-ն, նշանակելով Զայմիսին վերատին գերագոյն կոմիսար։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 14 մայիսի

Հաւասը հաղորդում է, որ կաբինէտի անդամները համաձայնութեան եկան պալատին ներկայացվելիք ծրագրի վերաբերութեամբ։

Ռիֆատ փաշան «Ֆիգարոյի» թղթակցին յայտնեց, որ Թիւրքիան համաձայն է Կրետէի ինքնավարութեանը և այն կէտին, որ սուլթանը մեծ պետութիւնների համաձայնութեամբ նշանակէ թիւրքահպատակ քրիստոնեայ նահանգապետ։ Մահմեդականների կրօնական, քաղաքացիական և քաղաքական իրաւունքները և սուլթանի գերիշխանութիւնը պէտք է անպայման ճանաչվեն։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 16 մայիսի

Մայիսի 14-ից կանգ առած պատերազմական գործողութիւնները կապ ունեն ապստամբների հետ տեղի ունեցող բանակցութիւնների հետ, որոնք վերջանում են ըստ երևոյթին աջողութեամբ։ Հաշտութեան պայմանները առայժմ յայտնի չեն։ Երէկ դէպի Դիակօվօ մեկնեցին զլխաւոր այժերը զինուորական մինիստրի և գլխաւոր շտաբի հետ միասին։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 16 մայիսի

Սկսվեց ցուլամարտի հանդէսների շաբաթը, որ առաջին անգամ թոյլ տրվեց Բարսելօնայի տօրէադօրներին այն պայմանով, որ ցուլերին չը սպանեն։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թէհրան, 16 մայիսի

«Իրանը-Նօոյ» լրագիրը անտես անելով դրված արգելքը՝ դուրս եկաւ առաջնորդող յօդուածով, որով Սիպէհդարի կաբինէտը անուանում է մաժուլի թշնամի, մեղադրում է նրան այնպիսի յանցանքի մէջ, որ անգամ գահընկէց շահը չէր գործի։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 15 մայիսի

Գեներալ-նահանգապետը չը կատարեց իր խոստումը և չը պատժեց ռուսաց գեներալ-հիւպատոսարանի աւագ միրզայի տանիքը բարձրացածներին։ Մայիսի 14-ի գիշերը անյայտ մարդիկ երկրորդ անգամ յարձակվեցին միրզայի տան վրա Դավաչի թաղում։ Կրակեցին մի քանի անգամ, որոնց ձայներին ոչ մի ոստիկան օգնութեան չեկաւ։ Դէպքի տեղն անմիջապէս եկաւ գեներալ-հիւպատոսարանի քարտուղարը 30 կազակներով։ Կատարվում է քննութիւն։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 9 մայիս

Ընդհ. ժողովը իր նիստը գումարեց երկու օր առաջ։ Կանխաւ եղած ազդարարութեան մը համեմատ, ոչ միայն դռնփակ էր ժողովը, այլ և ամէն միջոց ձեռք առնուած էր, որ դուրսէն և ոչ մէկ անհատ իսկ կարենայ դռնուիլ սբ. Լուսաւորիչ եկեղեցիին բակին մէջ։

Հակառակ որ մեծամասնութեան հարցը օրակարգի մէջ է, այդ օրը պէտք չտեսնուեցաւ ատով զբաղելու, որովհետև երեսփոխանները փութացած էին իրենց պարտքերը կատարելու, եթէ ներելի է ըսել պարտքեր կը կատարուին մեր ընդհ. ժողովի մէջ։

Կարգ մը երեսփոխաններու հրաժարագիրները դիւանի վրայ էին. ատոնցմով բողոք կը բարձուէր, թէ իրենք ալ յանձն չեն առներ ընդհանուր ժողովի երթալու՝ խըռնող ամբոխէն ծեծ ու նախատինք ուտելու համար։ Ժողովը ցաւ յայտնելով մերժեց հրաժարականները։

Դիւանի երկրորդ հարցն եղաւ, կարգ մը բողոքներու վրայ, ճշդել, թէ իրաւ է, որ նախորդ ժողովը ճնշումի ներքև տուած էր իր քուէն

Ծրագիր ինչքան կուզէք, բոլորն էլ վերցված մեր երկրի գոռացող պահանջներից, բոլորն էլ կարևոր, անհրաժեշտ, անյետաձգելի։

Միջոցներ՝ Աստուած տայ։

Մարդիկ՝ դրանից էլ քիչ։

Բայց արի ու տես, որ հայհոյում են, մեղադրում։

— Ինչու՞ մեզ մօտ մարդ չուղարկեցիք։

— Ինչու՞ մեզ մօտ էլ չէք գալիս. միթէ մենք աւելի բաղդաւոր ենք։

— Ինչու՞ երկաթուղու գծից հեռու չէք գնում — դիմում են ամեն տեղից՝ Սիսիանից, Զանգեզուրից, Դարալագեազից, Ղազախից, Էջմիածնից, Նուխու շրջանից, Նոյնիսկ Սև ծովի ափերից։

Դիմում են Վանից, Մուշից, Բասէնից, Աղթամարից *)։

— Մեզ մօտ էլ եկէք, մեզ էլ մի բան սովորեցրէք։

—

Չը գիտեմ ինչ կասեն գիտութեան և հասարակութեան միւս ճիւղերի մասնագէտները՝ բժիշկը, իրաւաբանը, մանկավարժը, ճարտարապետը և այլն, բայց մի բան ինձ համար պարզ է. այդ այն է, որ գիւղատնտեսի կոչումը բարձր է, դուրեկան և չաղափանց հետաքրքրական։

Ողջ մարդը իր շրջապատով՝ իր եղներով, կովերով, թռչուններով, արտ ու արօտով, մեղու ու շերամով, իր ողջ աշխատանքով և այդ աշխատանքի հետ կապված բնութիւնով գիւղատնտեսի հետազօտութեան առարկայ է։

Բոլորն էլ նրանից մի բան են սպասում. դուցէ մի խորհուրդը, մի ցուցմունքը աւելացնի նրա եկամուտը, շատացնի բերքը։

Եւ այսպէս մտածողները, այսպիսի սպասելիքներ ունեցողները միլիոնաւոր մարդիկ են, այն՝ որ ասում էինք «աշխատաւոր գիւղացիութիւն», «արտօնեալ կալուածատիրութիւն»։

Բոլորն էլ քեզնից մի բան են սպասում։

Ճիշդ է, այդ բանը շատ պրօզաիկ է, շատ նիւթական, բայց... նիւթով է ապրում մարդը և նիւթը աւելի է նրան հետաքրքրում։

Չը գիտեմ՝ այս թէ՞ մի ուրիշ աւելի բանաստեղծական, իդէական ձգտումներն են եղել պատճառը, որ ում որ պատահել եմ մեր ինտելիգենտներից, լսել եմ.

— Գիտե՞ք, ես էլ մի ժամանակ վճռել էի գիւղատնտես դառնալ, բայց...

Եւ այստեղ սկսվում էին մի շարք բացատրութիւններ, որ «կանքը, նրա պահանջները, հանգամանքները» և այլն և այլն։

Եւ ոմ գիտէ դեռ ևս որքան ժամանակ կանցնի, մինչև որ այդ «հանգամանքները» այնպէս փոխվեն, որ գիւղատնտեսացուն վճռի վերջապէս գիւղատնտես դառնալ... առանց մակուէր լինելու հետևանքով...։

Բայց բաւական է։ Մտնենք գիւղ։

Ա. Աթանասեան

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան համար Արզրումի շրջանի պատուիրակ է ընտրված Ստեփան Մալխասեանցը (կանդիդատ առաջադիմական խմբի)։

—

Մենք ստացանք պօստով հետևեալ նամակը.

«Թիֆլիսում «թայֆայականները» ղղածգութեան մէջ են Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան ընտրութեան առիթով։ Նրանք փորձում են գործ դնել իրանց հին զէնքերը, յիշելիքներ են անում քահանաներին, որ աշխատեն իրանց կուսակցութեան պատկանող մարդկանց ընտրել տալու։ Նրանց գործակալները ամէն տեղ հաւատացնում են ժողովրդին, թէ ներկայ հոգաբարձութեան օրով Ներսիսեան դպրոցը հասել է իր բարեկարգ վիճակին, մինչդեռ ակնյայտ է, որ դպրոցը հասցրել են սնանկութեան և անկեալ դրութեան։ Ա. Մ.»։

—

Մեզ դիմում են և հարցնում՝ ճիշդ է, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան համար ընտրելի թեմական պատգամաւորների ժողովը պէտք է զբաղվի և առաջնորդի ընտրութեան հարցով, և ինչ է լինելու առաջադիմականների վերաբերմունքը։ Հարկաւոր ենք համարում յայտնել, որ առաջնորդի ընտրութեան հարց ամենևին չը կայ։ Նոր առաջնորդ ընտրելու համար պէտք է որ 1) առաջնորդը կամ հրաժարված լինի իր պաշտօնից կամ արձակված, 2) Կաթողիկոսի կամ սինօդի կողմից նոր ընտրութիւն նշանակված լինի։ Բանի որ ոչ մէկը և ոչ միւսը կայ, ուրեմն որևէ հարց նոր առաջնորդի ընտրութեան մասին չէ կարող լինել։ Հաւաքած տեղեկութիւններից երևաց, որ այդ լուրերը տարածում են մի խմբակի մարդիկ մոլորեցնելու նպատակով ընտրողներին։

—

Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութիւնը, որ մինչև այժմ զանազանել էր հաշիւ ներկայացնելու ժողովրդին, վերջապէս հրատարակել է այս օրերս իր գործունէութեան տեղեկագիրը 1908/9 տարվայ համար և իր նախահաշիւը 1909/10 տարվայ համար։

—

*) Այս դիմումները եղել են Թիֆլիսի հայ Դիւղատնտես. և Տնայն. Ընկերութեան։ Ա. Ա.

Փոթի, 14 մայիսի

Կիրակի օր, ամսիս 16-ին, նշանակված է ծխ. ժողով՝ ընտրելու մի պատգամաւոր, որը, գնալով Թիֆլիս, մասնակցելու է Ներսիսեան դպրոցի հոգաբարձական առաջիկայ ընտրութեանը։ Բ. Գ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Հին-Նախիջևան, 10 մայիսի

Երևանի փոխ-թեմական Խորէն վ. Մուրադբէկեանը, որ ամսիս 7-ին քաղաքս եկաւ վերջերս մեր ծխ. դպրոցում տեղի ունեցած մի քանի անախորժ միջադէպերի պատճառով, հրաժարեցնել տուեց տեղիս հոգ. կառավարութեան անդամներին ու քարտուղարին և նրանց փոխարէն ուրիշների նշանակեց։ Փոխ-թեմականը գնաց և Գարմիր վանքը։

Ինքնապաշտպանութեան փորձերը պարբերաբար հող են դնել և սեղանում։ Երեք օրվայ ընթացքում 4 դէպք է տեղի ունեցել, որից 2-ը մահվամբ են վերջացել։ 4-ն էլ տղամարդիկ են և նրանց ինքնապաշտպանութեան փորձերը զանազան աստառներ են կրում։

Ահրիմանեան

—

Բալախանի, 7 մայիսի

15 տարի է, որ Բալախանու հայ ժողովրդի հովիւն է ծիսատէր Մեսրոպ աւ.-ք. Տէր-Ոսկանեան։ Այդ երկար տարիների ընթացքում Բալախանու բազմահազար ժողովուրդը ոչ մի անգամ դժգոհութիւն չէ յայտնել հոգ. իշխանութեանը այդ քահանայի վերաբերմամբ ոչ գրաւոր և ոչ էլ բանաւոր։ Սակայն հոգ. իշխանութիւնը բացի նրան պատժելուց՝ կաթողիկոսական գահի թափուր ժամանակը կարգազուրկ յայտարարեց նրան և պաշտօնապէս զիմեց քաղաքապետին, որ քահանայական զգեստը հանել տայ և Տէր-Ոսկանեան քահանան այսուհետև ճանաչվի աշխարհական։

Հոգևոր իշխանութեան այդ կարգադրութիւնը բալախանցիք այլևս տանել չը կարողացան. նրանք մի հատեստ խնդրագրով դիմեցին հոգ. իշխանութեանը և խնդրեցին, որ յայտնէ իրանց քահանայի մեղքը։ Բայց հոգ. իշխանութիւնը մինչև անգամ արհամարհեց և անպատասխան թողեց հասարակութեան խնդիրը։ Այնուհետև ծիսականները մի շարք ժողովներ գումարեցին, քննադատութեան ենթարկեցին հոգ. իշխանութեան արհամարհական լռութիւնը և խորհուրդ տուին իրանց քահանային՝ ոստիկանութեան աչքից խուսափելու և չը լայտառակվելու համար՝ հեռանալ Բագուից մի խուլ անկիւն, մինչև Վեհ. Հայրապետի օծումը և Էջմիածնի գահ բարձրանալը։

Այդպէս էլ եղաւ։ Վեհափառը Էջմիածին հասնելուց յետոյ միայն հ. Մեսրոպը հրապարակ եկաւ, և Վեհափառը, լսելով նրա բողոքը, կարգազրութիւնից ազատեց յիշեալ քահանային։

Ներկայումս Բալախանու հայ ծխականները ամեն ամա 10-ս օր է, որ թաղական-շրջանային ժողովներ են գումարում ինչպէս Բալախանում, նոյնպէս և քաղաքում։ Սը-բասք այս օրերս երեք հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն են ուղարկում Նորին Վեհափառութեան մօտ այս մրսսիայով, որ այդ պատգամաւորները միանգամ ընդմիշտ պարզեն Վեհափառի առաջ Շամախու կոնսիստորիայի և Բագուի եկեղեցիների գործակալութեան ու էջմիածնի մի շարք հոգևորականների մութ պատկերը և բացատրութիւն պահանջեն, թէ ինչու՞ և ո՞ր յանցանքի համար է կարգազուրկ արվել իրանց ծիսատէր քահանան։

Բալախանցիք իրանց ծիսատէր քահանային այդ կերպ խիստ պատիժ տալու գործում այլ աստառ են տեսնում և վճռել են, ինչ գնով էլ լինի, վերահաստատել իրանց քահանային Բալախանու վրա։ Եւ հէնց այդ պատճառով էլ 140-ից աւելի նորածիններն չեն մկրտում և բազմաթիւ ծխականներ ամուսնութեան այլ քահանայ չեն ընդունում։

Պատգամաւորները կը ճանապարհվեն վաղը, ամսիս 8-ին ուղղակի Էջմիածին։

Ս. Գարագաշ

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

—

Նուխու գաւառի կեանքը նման է մի ժայռի, որը տարիների ընթացքում ոչ դիրքն է փոխում, ոչ գոյնը։ Բաւական չէ որ հեռու է կենտրօնական վայրերից ու երկաթուղուց, զուրկ է նաև մտածող ու գործող անհատներից։ Բնական է, որ այսպիսի վայրերում ժողովուրդը միշտ տուժում է շնորհիւ իր տգիտութեան։

Այստեղ բացակայում են ծխ. դպրոցներ, գիւղական դեղատներ, հիւանդանոցներ (հանդերձ բժիշկներով) և առ հասարակ նման կուլտուրական հիմնարկութիւններ։ Նահապետական նիստ ու կաց, հին փտած սովորութիւններ և, որ ամենագլխաւորն է, նախապաշարմունք... Չը կայ մէկը, որ ձայն բարձրացնէ, որ առաջնորդէ ժողովրդին...

Նուխուց 18—25 վերստ հեռաւորութեան վրա գտնվում են 6—7 հայ գիւղեր։ Այդ գիւղերը Նուխուց ամենամօտ հայաբնակ գիւղերն են։ Վերոյիշեալ գիւղերի կենտրօնում գտնվում է Դաշբուլաղ գիւղը, որ ունի մօտ 300—350 տուն։ Դաշբուլաղը կենտրօնական տեղի լինելով՝ այդտեղ են գտնվում գիւղական բոլոր կառավարչական հիմնարկութիւնները։ Թէ ինչքան յետ է մնացել Դաշբուլաղը իր շրջակայքով, անհնար է մի թղթակցութեան մէջ մանրամասն կանգ առնել այդ մասին։ Նախապաշարմունքը զգալի ազդեցութիւն է հասցնում գիւղացիներին թէ նիւթապէս և թէ ֆիզիկապէս։ Չը նայած որ կան մի շարք միջոցներ, որոնցով կարելի է յետ կանգնեցնել գիւղացիներին այդ կորստաբեր ճանապարհից, բայց դժբաղդաբար չունենք այնպիսի մարդիկ, որոնք գործադրէին այդ միջոցները։

Մեր գիւղացիներն այնպիսի մի վայրում են ապրում, ուր երբէք չեն արժանանայ հայ հրապարակախօսի դասախօսութեանը կամ հայ գիւղատնտեսի կենդանի խորհուրդներին։ Այս բոլորի փոխարէն գիւղացին ունի «սուրբեր», որոնք գտնվում են զանազան լեռների գագաթներում կամ գիւղական «օջախներում» և տարիներ շարունակ քանդում են մեր գիւղացու տունը։ Արդեօք ժամանակ չէ՞, որ այս հարցի վրա ուշադրութիւն դարձնեն մեր գործիչներն ու մամուլը։ Արդեօք ժամանակ չէ՞, որ մեր գիւղական քահանաները հէնց եկեղեցու բեմից իրանց ձայնը բարձրացնեն, ժողովրդին հակացնեն, որ թոքախտաւորը «սուրբից» չի բժշկվի, որ լուսնոտները «սուրբերի» զուլերը չեն, այլ հիւանդներ, որոնց բժշկութիւն է հարկաւոր...

Մինչև ե՞րբ պիտի կուրօրէն նայենք այս կորստաբեր սովորութեանը։ Այն գումարով, որ մեր գիւղացին «սուրբերի» ճանապարհներին է ծախսում զուր տեղ, կարող է և բժիշկ պահել և հիւանդանոց։

Յիշածս 6—7 գիւղերը զուրկ են ծխ. դպրոցներից։ Միմիայն 3 գիւղերում կան 3 միդասեան պետ. դպրոցներ, այն է՝ Դաշբուլաղ, Գօյբուլաղ և Սաբաթլու գիւղերում։ Այս դպրոցներում մեր գիւղացու երեխան համարեա թէ միայն այբուբեն է սովորում, հազիւ հազ գրաճանաչ դառնում, իսկ դպրոցն աւարտելուց յետոյ դասագրքերը ծալում ու մի կողմ դնում։

Այսպիսի պայմաններում, ի հարկէ, գիւղացի երեխան ժամանակի ընթացքում բոլորովին կը մոռանայ գրել-կարդալը։ Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով, Թիֆլիսաբնակ դաշբուլաղեցիներն իրանց համագիւղացի Սարգիս Տէր-Յարութիւնեանի նախաձեռնութեամբ 1906 թ. միտք յղացան Դաշբուլաղում ձրի գր.-ընթերցարան ունենալու, և 1908 թ. յուլիսի 20-ին գրադարանը պաշտօնապէս բացվեց։ Այժմս գրադարանի գրքերի թիւը հասնում է հազարների։ Շնորհիւ հիմնադիրների եռանդուն գործունէութեան՝ գրադարանը հարուստ է գրքերի շատ տեսակներով, այնպէս որ դաշբուլաղեցի այն երիտասարդներն ու պատանիները, որոնք փոքր ի շատէ գրել-կարդալ գիտեն, կարող են մեծ օգուտ քաղել գրադարանից ձրիաբար։

Այսպիսի մի շրջանում, ինչպիսին Դաշբուլաղի շրջանն է, գրադարանի գոյութիւնը մեծ նշանակութիւն ունի, բայց դժբաղդաբար այդ չեն հասկանում մեր գիւղացիները։ Գրադարանը չունի սեփական շինութիւն, որն անհրաժեշտ է։ Եւ մեր գիւղացիները գիտեն, որ անհրաժեշտ է այդ շինութիւնը, բայց լուռ ու ժունջ են։ Եթէ նրանցից ամեն մէկը մի քար բերի, կարելի կը լինի ոչ միայն գրադարանի շէնք կառուցանել մէկ կամ երկու սենեակից բաղկացած, այլ նոյնիսկ անագին շինութիւններ կանգնեցնել։ Գրադարանը ոչ մի լրագիր չէ ստանում։ Մի գիւղ, որ կենտրոն է 5—6 գիւղերի, այսօր զուրկ է լրագիրներից։

Բայց դէցուք ժողովուրդը չէ հասկանում կրթութեան անհրաժեշտութիւնը, սակայն մթէ՞ մեր քահանաներն ու բանիմաց երիտասարդութիւնն էլ չեն ըմբռնում։

Մինչև ե՞րբ պիտի մատների արանքով նայենք մեր կրթական, առաջադիմական և հասարակական գործերին։

Նուխի Մ. Բէգլարեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Պարիզի Էյնար բանկը ուղարկեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան առուտնով 3 միլիոն ռուբլու փոխառութեան վերջին գումարը, որ ներկայումս պահվում է Վօլժսկо-Կամսկի բանկում ընթացիկ հաշուով։

✦ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան աբբահայր Գովրիկեանի արքեպիսկոպոսութեան բարձրանալու հանդիսի առիթով «Մշակի» խմբագրութիւնը ուղարկեց հետևեալ շնորհաւորական հեռագիրը. «Վիեննա, Մխիթարեան վանք. արքեպիսկոպոս Գովրիկեանին։ «Մշակի» խմբագրութիւնը ներկայացնում է ձեզ իր անկեղծ շնորհաւորութիւնները ձեր արքեպիսկոպոսութեան աստիճանին բարձրանալու առիթով»։

✦ Ինչպէս լսել է «Հ. Բ.» լրագիրը, շուտով սենատօրական քննութիւն է նշանակվելու Կովկասի ինտենդանտական վարչութեան գործերի համար։ Քննիչի ով լինելը պահվում է գաղտնի։

✦ Տ. Մ. Փիլոյեանի առևտրական գիտութիւնների և օտար լեզուների դասընթացքներում այս տարի սովորում էին 124 հոգի, որոնցից 23-ը կանայք։ Առևտրական բաժանմունքը աւարտել են 66 հոգի, որոնցից ռուսներ՝ 15, վրացիներ՝ 8, հայեր՝ 43։

✦ Կենդանաբան Սատունին երէկ հաղորդեց Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան նախագահ Ա. Բալանթարին, որ Շիրակից ուղարկված առնէտների հետազօտութիւնը ցոյց տուեց, թէ նրանք պատկանում են «Սուսլիկ» կոչված տեսակին, որ յայտնի է լատինական «Citellus Schmidti» անունով։ Այդ կենդանու դէմ մաքառելու միջոցները բոլորովին ուրիշ են, քան մկների դէմ մաքառելու միջոցները, ուստի հասկանալի է, թէ ինչու մինչև այժմ գործադրված միջոցները անցել են ապարդիւն։

✦ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը վաւերացրեց Գանձակի նահանգական ատեանի որոշումը, որի համաձայն դատարանին է յանձնվելու Գանձակի գաւառի 3-րդ ժասի նախկին պրիստաւ Ալ. Բուկօվսկին՝ քր. պատժ. 354-րդ յօդուածի մէջ նախատեսված յանցանքի մեղադրանքով։

✦ Թիֆլ. ոստիկանապետի կարգադրութեամբ ոստիկանական պաշտօնեաները հրամայվում են, որ կառապանները զանցառու չը լինեն քաղաքային վարչութեան սահմանած վերջին պակասեցրած սակագնից, որ ցուցադրված է լինելու ամեն մի կառքի վրա։

✦ Ժողովրդական համալսարանի ընկերութեան օգտին մայիսի 27-ին տեղի կունենայ մեծ զբօսանք, որի համար այժմեանից պատրաստութիւններ են տեսնվում։

✦ Վրաց դերասանական խումբը ձեռնարկել է տուրնէ կատարելու Վրաստանի այլ և այլ տեղերում։ Խումբը մինչև այժմ ներկայացումներ է տուել Ճիաթուրի, Կվիրիլի, Սամտրէդի աւաններում և Փօթի քաղաքում։

✦ Վրաց ազնուականութեան ընդհանուր ժողովում ընդունվեց հետևեալ որոշումները. 1) ազնուականների պատգամաւորների և պարագլուխների ժողովին յանձնել Կախէթեան երկաթուղագծի կառուցման ընդհանուր ղեկավարութիւնը. 2) գնել ժողովի տրամադրութեան տակ 5000 ռուբլի՝ ծախքերի համար։

✦ Սղնախի գաւառում մորեխը մեծ չափեր է ընդունում։

✦ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, ներքին գործերի մինիստրութիւնը մի նախագիծ է մշակում կրթական նուիրատուութեան դէմ, որ վերջերս առանձնապէս տարածվել է մեծ քաղաքներում։

✦ Շուտով Փօթիում լոյս կը տեսնէ մի ռուս օրաթերթ «Западное Закавказіе» անունով։

✦ Բաթումի վրաց և հայ հասարակութիւնները միացած ոյժերով շուտով ոտնձգում են դերասան Գեղէոն Միրաղեանի յօբելեանը։ Գ. Միրաղեանը արդէն ստացել է հրաւէր։

✦ Ճիաթուրի հասարակութիւնը այս կիրակի մի ներկայացում է տալու ի պատիւ դերասան Գ. Միրաղեանի՝ մասնակցութեամբ յօբելեարի։

✦ Զաքաթալայի շրջանի Բիլաքան գիւղից մեզ գրում են, որ մայիսի 14-ին, երեկոյեան ժամը 8½-ի սօտերքը, Արևմուտքում երևացել է Հալլէյի գիսաւոր աստղը, բաւականին մեծ և երկար պոչով՝ ուղղված դէպի հարաւ-արևելք։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ Թիֆլիսեցի Իօսիֆ Գիվլիէվ և Վասիլիյ Գեգէլաշվիլի ենթարկվում են տուգանքի հասցէների սեղանի կանոնները խախտելուն համար՝ առաջինը 5 ռ., երկրորդը 50 ռուբլով։ Ա. Անդրէասօվը, Աւ. Գրիգորեան և Իվան Գավլիաշվիլին միսը սովորականից բարձր գներով ծախելուն համար — 25-ական ռուբլի ամեն մինը։ Պետր Տապուրեան՝ 25 ռուբլով ոստիկանական պաշտօնեայի վիրաւորելուն համար և Պաւել Գօնչարաձէն 200 ռուբլով՝ անվկայական առևտուր անելուն համար։

✦ Մայիսի 16-ին, երեկ. ժ. 7-ին, Սլէպցօվսկայա փողոցի № 4 տան բակում ճան. հաղ. Խաչատէր Վլադիմիր Կօլիւբակինը Կովկասի Փոխարքայի գիւանատան գործավար Նիկօլայ Վէբէրի հետ բացատրվելու ժամանակ ատրճանակի մի քանի հարուածներով վիրաւորեց Վէբէրին մարմնի մի քանի մասերից։ Վիրաւորված Վէբէրին անդգայ տարան հիւանդանոց, ուր և մեռաւ։ Տեղական պրիստաւը ձերբակալեց Կօլիւբակինին։ Ձերբակալվածը ունի զէնք կրելու թոյլատրիչ վկայական։ Սպանութիւնը կրում է սիրային բնաւորութիւն։

✦ Մայիսի 16-ին ծննդաբերական ապաստարանի մօտերը գտան մի նորածին երեխայի, որ, ինչպէս ընտանիքից յետոյ պարզվեց, նետել էր գեղջուհի Մարիա Զանիկաշվիլին, որովհետև սրա ամուսնը թողնելով կնոջը երեխայի հետ անապրուստ փախել է յայտնի չէ ուր։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Կ. Պոլսի հայոց պատրիարքը հեռագրով կարգադրել էր Եւրօպայի հայ գաղութի առաջնորդ Դէորգ եպ. Իւթիճեանին, որպէսզի սա, որպէս ներկայացուցիչ հայութեան, ներկայ լինի Եդուարդ VII-ի յուղարկաւորութեանը։ Իւթիճեանին, իր այդ միսսիայի ժամանակ, ընկերացել են Լօնդօնի հայ առևտրականներից երկու հոգի։ Անգլիայի հայ գաղութը մի շքեղ պսակ է դրել հանգուցեալի դագաղի վրա։

✦ Ապրիլի 25-ին, կիրակի, Զմիւռնիայի հայոց մայր եկեղեցում տեղի է ունեցել հետևեալ դէպքը, որ աւելի է ծառայել Զմիւռնիայի թեմի առաջն. տեղապահ Արսէն վարդապետի հրաժարական տալուն։ Բանն այն է, որ երկու դաշնակցականներ այդ քաղաքը գնալով դիմել են տեղական ազգ. վարչութեանը և խնդրել, որ կիրակի, ապրիլի 25-ին, եկեղեցին իրանց տրամադրվի՝ միտինգի համար։ Նրանց դիմումը մերժվում է, մանաւանդ որ Վեհ. Հայրապետի՝ եկեղեցիներում միտինգ գումարելը արգելող կարգադրութեան մասին արդէն յայտնի է լինում տեղական ազգ. վարչութեանը։ Այնուամենայնիւ՝ դիմողներին առաջարկվում է իրանց բանախօսութիւնները անել տեղական հայոց ուսումնարանի դահլիճում։ Եւ, ըստ երևոյթին, տրված այս պատասխանը գոհացնում է դիմողներին։ Բայց ահա կիրակի օրը, եկեղեցու աւարտումից անմիջապէս յետոյ, դեռ աղօթողները եկեղեցուց դուրս չեկած, այդ դաշնակցականներից մին, առանց այլ և այլի, բարձրանում է սեղան և սկսում իր բանախօսութիւնը։ Ապա հրապարակ է գալիս նրա ընկերը և նա ևս սկսում է իր ճառը, այսպիսով միանգամայն յանկարծակիի բերելով տեղական ազգ. վարչութիւնը։

✦ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին կից գործող խառն ժողովը եպիսկոպոսական վկայականներ է տուել Դիարբէքիրի առաջնորդ Զաւէն, Էնկիւրիի առաջնորդ Բարգէն և Կոտուց անապատի վանահայր Ստեփան Աղազատեան ծ. վարդապետներին, որոնք մօտիկ ապագայում կը մեկնեն Էջմիածին՝ եպիսկոպոսական աստիճան ստանալու համար։

✦ Թիւրքիայի Մամուրէթ-իլ-Ազիզ նահանգի Խարբերդ քաղաքի մօտ գտնվող Մէզրէ գիւղաքաղաքից գրում են Նիւեօրկում հրատարակվող «Երիտասարդ Հայաստան» թերթին հետևեալ օտարոտի դէպքի մասին, որ մենք քաղուածօրէն առաջ ենք բերում.

«Փետրվարի 14-ին Թոփճեանի մահուան սգահանդէսը կատարուեցաւ Մայր եկեղեցւոյ մէջ, նախաձեռնութեամբ տեղիս դաշնակցականներուն և ի ներկայութեան սգակից միամիտ ժողովրդին։

«Այս սգահանդէսին վրայ չէր արժեր խօսիլ, եթէ սովորական բան եղած ըլլար։

«Աւագ-ուրբաթ օրուայ պէս եկեղեցւոյ պահարանէն հանուեցաւ և զարդարուեցաւ Քրիստոսի գերեզմանը, որու մէջ պառկեցուցին Թոփճեանի նշխարները ներկայացնող խաչը»...

Բացատրութիւնների կարիք չը կայ, որովհետև փաստերը ինքնին շատ պերճախօս են։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Զուբալօվեան ժողովրդական տան մէջ հայ թատերասէրների խումբը իր հերթական ներկայացման համար ընտրել էր ամերիկացի յայտնի իմօրիստ-գրող Մարկ Տուէնի (Կլեմէնս) «Ինչպէս դարձաւ նա խմբագիր» 2 գ. կոմէդիան, թարգմ. Գ. Մելքանեանի, և առաջին անգամ Յար. Թումանեանի «Ալք» նոյնպէս 2 գործ. կոմէդիան։

Մարկ Տուէնի սրամիտ պիէսի երկու գլխաւոր դերերը վերցրել էին Գ. Երիցեան՝ խմբագիր-հրատարակիչ և Գ. Փիրումեան՝ Սամ։ Գ. Երիցեան շնորհալի խաղացող է, սակայն նրա ձայնի միօրինակութիւնը ստուեր ձգեց իր դերի ամբողջացած աղօութեան վրա։ Փիրումեան նոյնպէս շնորհալի և վստահ թատերասէր է, բայց իր առաւելապէս կոմիկ դերերում մացնում է շարժ՝ իցէ թէ շատ ոգևորվելուց կամ. չափազանցելուց։ Միւս դերակատարները՝ օր. Զժշկեան, Տէր-Առաքելեան, Ալլահվերդեան, Թորոսեան, Մելիք-Նուբարեան՝ իրանց դերերումն էին։

Յար. Թումանեանի «Ալքը» նորութիւն է հայ թատերական ինքնուրոյն գրուածքների մէջ։ Հեղինակը իր պիէսի սիւժէտը վերցրել է շինական աւանդական նախապաշարմունքից՝ ալքի, սատանայի (դև) մասին, որի մարմնացումը արտայայտել է յանձին կնոջ։ Այս էլ աւելի հին մտքի շուրջը Թումանեան շարահիւսել է գիւղական կեանքի մէջ մի դէպք, պէտք է ասած, բաւական երկար և ձգձված տեսիլներով։

Ընդգծելով հանդերձ պիէսի երկարեցված մասերի կրճատման անհրաժեշտութիւնը, մենք աւելի ուրախ կը լինէինք տեսնել նրան իբրև ժողովրդական մի գրուածք, որ անհամեմատ ցանկալի նշանակութիւն կը ստանար ազգագրական և վարքագրական տեսակէտից։

Պիէսի հեղինակը բեմ կանչվեց։ Լաւ տարան իրանց դերերը տ. Զաբէլ, Ալլահվերդեան, Մարգարիտ և այլն։ Ե.

—

Փօթի, 14 մայիսի

Ահա քանի օր է, ինչ այստեղ է դերասան Աւօ-Խարազանի խումբը։ Մինչև այսօր ներկայացրին «Ոճրագործի Ընտանիքը», «Սէր և Խարդաւանք» և երեկ երեկոյեան «Ուրիել Ակօստա». ներկայացումները տեղի ունեցան հայոց ծխ. ուսումնարանի դահլիճում։ Չը նայած բեմի անյարմարութիւններին, ներկայացումները բաւական անցան և հասարակութեան վրա որոշ տպաւորութիւն թողին։ Բոլոր ներկայացումներին էլ դահլիճը լիքն էր, գլխաւորապէս բանոր դասակարգից։ Դժբաղդաբար՝ մեզ անյայտ պատճառներով՝ դերասաններն չը խաղացին պիէսներ հայկական իրականութիւնից, այնպէս որ ներկայացված պիէսները բոլորովին անմատչելի էին բանուոր-հանդիսականներին։ Ներկայացումներ-

ներից ստացված օգտի մի մասը յատկացված է ծխ. ուսումնարանի։

Բիւզանդ Գասպարեան

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն. Մարր. «Изъ поѣздки въ Турецкій Лазистанъ». С.-Петербургъ, 1910 г.

Լոյս տեսաւ պրոֆեսոր Մարրի այն ճանապարհորդութեան նկարագրութիւնը, որ նա արել էր անցեալ աշնանը դէպի Թիւրքական Լազիստանը։

Այդ ճանապարհորդութեան մասին «Մշակի» մէջ հաղորդված էին Լիւնքէի մի քանի տեղեկութիւնները։

Այժմ մեր առաջ գիտնական ճանապարհորդի սեփական հաղորդագրութիւնն է։

Մարրը սկիզբն է դնում Լազիստանի ուսումնասիրութեան։

Զը նայելով որ Լազիստանը շատ մօտ է մեր երկրին, որ նա մեզ սահմանակից է, այնուամենայնիւ նա շատ քիչ է ուսումնասիրված։ Եւ որ աւելի ցաւալին է, դա այն է, որ ուսումնասիրութեան գործը դրված է ամենաանպատ պայմանների մէջ։ Մարրը իր ժողված բոլոր տեղեկութիւնները ձեռք է բերել մեծ դժուարութիւններով, գտնվելով մշտական կասկածների տակ տեղական ազդեցիկների և ժողովրդի կողմից։

Պրոֆեսոր Մարրին այնուամենայնիւ աջողվել է բաւականաչափ նիւթ հաւաքել ուրուագծելու Լազիստանի ազգագրական դիրքը և պարզել նրա արժէքն ու նշանակութիւնը հնագիտական և լեզուագիտական ուսումնասիրութեան համար։

Ճանապարհորդը տալիս է տեղեկութիւններ երկրի և նրա ժողովրդի կենցաղի մասին։ Բազմաթիւ նկարներ լուսաբանում են նկարագրութիւնները և նպաստում են կազմելու գաղափար Առաջաւոր Ասիայի այդ անկիւնի մասին։

Լազիստանում լազերը կամ ճանները պահպանել են իրանց լեզուն և աւանդութիւնները ոչ ամենուրեք։ Մարրը նուիրում է հետաքրքրական էջեր լազերի ազգայնական այլասերման երևոյթներին և թւում է այն անկիւնները, ուր մնացել են լազութեան մնացորդները։ Նա յիշատակում է Ամինեան ձորում 64 գիւղ, որտեղ պահպանվել է լազերի լեզուն, և մի քանի գիւղեր ուրիշ շրջաններում։

Լազերը, գտնվելով թիւրքական վարչական կենքի և թիւրքական կրթութեան ազդեցութեան տակ, արհամարհանքով են վերաբերվում դէպի մայրենի լեզուն և նրան համարում են բաժին յետ ընկած գիւղերի։ Իրանք չեն հետաքրքրվում իրանց լեզուի խնդիրներով և զարմացել են, երբ տեսել են Ռուսաստանից եկած մի գիտնականի, որ հետաքրքրվում է իրանց զուտհիկ և արհամարհված լեզուով։

Սակայն չէ կարելի ասել, թէ լազերը միշտ էլ այդպէս կը վերաբերվեն իրանց լեզուին։ Նրանց մէջ շատ կան կրթված երիտասարդներ, որոնց սէջ պատահում են հետաքրքրվողներ գիտական և քաղաքական խնդիրներով։ Եւ եթէ լոյս տեսնեն մի քանի գիտնական աշխատութիւններ լազերի և Լազիստանի մասին, նրանք սկիզբը կը դնեն տեղական շահագրգիռ հարցասիրութեան, որը կամաց-կամաց հող կը պատրաստի լազերի լեզուի, աւանդութիւնների և ազգագրական առանձնայատկութիւնների ուսումնասիրութեան։

Ա. Քալանթար

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բալախանի, 14 մայիսի

«Մշակի» № 98-ում կարդացի Գիւլլուջայից Գ. Դ.-ի տուած տեղեկութիւնները, որտեղ տեղեկատուն հաղորդել է մի շարք անհիմն տեղեկութիւններ և ի միջի այլոց չէ զլացել ասելու, որ վերջերս Բագուից՝ Բալախանու նաւթահանքերից գիւղ է վերադարձել մի պարոն, որը 40—45 տարեկան տղամարդ լինելով՝ ամուսնացել է բռնի կերպով մի 14 տարեկան աղջկայ հետ։ Այդ վերջերս գիւղ գնացողը և «բռնի» կերպով ամուսնացողը ես եմ։ Անցեալ տարվայ վերջերում գիւղ եմ գնացել և ամուսնացել ոչ թէ 14 տարեկան, այլ 19 տարեկան աղջկայ հետ և այդ ամուսնութիւնը եղել է ոչ թէ բռնի կերպով, այլ հետեւել պարագաներում։

Գիւղ գնալուց 10 օր յետոյ, ըստ գիւղական սովորութեան, ես խնդրեցի աղջկայ ծնողներից իրանց աղջկայ ձեռքը, որ հաւանայնվեցին թէ ծնողները և թէ աղջիկն ինքը։ ոչ մի բռնութիւն տեղի չէ ունեցել։ այդ մասին կարող են հաստատել բոլոր գիւղացիները։

Ինչ վերաբերում է իմ տարիքիս, կասեմ, որ ես ոչ թէ 40—45 տարեկան եմ, այլ 33 տարեկան, որի մասին նոյնպէս կարող են հաստատել գիւղացիներից շատերը։

Ս. Շամամեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Լօնդօն, 19 մարտի

Ոչ մի անգամ Անգլիայի պատմութեան ընթացքում Լօնդօնը չէ եղել այսպէս մռայլհանդիսաւոր և սգաւոր։ Ամենքն էլ սգի մէջ են։ Բոլոր խանութները սեւաւորված և սև տախտակներով են ծածկված։ Ամենքն էլ վշտահար են, ապշած, համակված անըսպասելի վշտով, մի վիշտ, որ պատել է ոչ միայն Մեծ-Բրիտանիային և Իրլանդիային, ոչ մինչև անգամ կայսրութեանը, այլ ամբողջ աշխարհին, ամբողջ քաղաքակիրթ և լուսաւորված աշխարհին։ Այժմ տեղը չէ խօսելու այդ կարճատև թագաւորութեան մատուցած ծառայութիւնների մասին, ուստի ես կը նկարագրեմ հանգուցեալ թագաւորի աճիւնի Ուէսթմինստերեան աբբայութեան պատմական կամարները տեղափոխելու հանդէսը։

Երբ ես գուրս եկայ տրամվայի վագոնից, պալատի և պարլամենտի մօտ հեծեալ և հետիոտ ոստիկանութիւնը արդէն շրջապատել էր փողոցներն ու մուտքերը և գրաւել էր դիրքեր։ Ժողովուրդը կանգնած էր փողոցի երկարութեամբ և իմ առջև արդէն կանգնած էին 6 շարքեր, չը հաշուելով պօլիսմէններին և զինուորներին, թէպէտ և ես վաղ առաւօտեան էի եկել։ Ասում են, որ վաղը հանդէսը տեսնելու համար պէտք է տեղի վրա լինել առաւօտեան 4-ից մինչև 5 ժամը, այլապէս տեղ չէ կարելի գտնել կանգնելու համար անգամ։ Մառախլապատ, տաք առաւօտ էր։ Օդը լի էր ամբոխի խուլ աղմուկով, որը շարժվում էր փողոցով և տեղեր էր բռնում փողոցի երկարութեամբ։ Ամեն ինչ կարծես թէ սառել էր։ Ինձանից ոչ հեռու երևում էր Ուէստմինստէրեան աբբայութեան աշտարակը, որի ժամացոյցը կը զարկէ առաջին անգամ Անգլիայի պատմութեան մէջ։ Ամեն ինչ լռեց։ Ժամանակ առ ժամանակ լռութիւնը խախտվում էր զինուորական կօմանդայի մէջ ընդ մէջ խօսքերով։ Ամեն տեսակ զէնքի մօտ 12,000 զինուոր կամաց բռնում էին տեղեր։ Ուէստմինստէրեան պալատի մուտքի մօտ կանգնած էր ծովային բրիգադայի մի զօրամաս։ Թիկնաւէտ ծովազնացներն իրանց աւանդական յարդեայ գլխարկներով էին և Մխոֆարզովեան մագաղինկաներով։ Հէնց այդտեղ նրանց առաջն էր կանգնած անգլիական նաւատորմի ամբողջ սերը, բոլոր աչքի ընկնող օֆիցէրները, ծովապետները։

Վերջապէս ցերեկվայ 12 ժամին խուլ և յանկարծակի հնչեց ժամացոյցի առաջին զարկը։ Հեռու Բուկինհէմեան պալատի ուղղութեամբ լսվեցին Բէթհօվէնեան թաղման մարշի հանդիսաւոր և ծանր հնչիւնները, որ նուագում էր արքայական գվարդիայի բարձրագլխարկ զինուորների միացեալ օրկէստրը։ Ես կեանքումս չեմ մոռանայ այդ սրտաշարժ տեսարանը։ 400 մարդ նուագում էին թաղման մարշը, որը հանդիսաւոր կերպով հնչվում էր Լօնդօնի մայր առաւօտվայ սառած օդում։ Խուլ, մեռած հնչեց ժամացոյցի երկրորդ զարկը աշտարակում։ Յուղարկաւորութեան հանդէսը մօտենում էր։ Փողոցների երկարութեամբ շարքով կանգնած էին անգլիական զօրքի և նաւատորմի լաւագոյն մասերը։ Եթէ մի րօպէ կարելի լինէր մոռանալ թաղումը, կը թւար այն ժամանակ մի շքեղ զինուորական տեսարան։ Իմ առջև գլխները խոնարհեցրած կանգնած էին Ալդէրշօտեան բրիգադայի երկու շարք զինուորներ կարմիր հագուստներով և սպիտակ գլխարկներով։ Նուագախումբը մօտեցաւ մեզ. լսվեց կօմանդայի ձայնը։ Զինուորները զինուորական պատիւներ տուին։ Հանդիսաւոր խոնարհվեցին շօտլանդեան խայլէնդէրների դրօշակները, խոնարհվեցին զինուորների գլուխները, հանդիսատեսները հանեցին գլխարկները։ Թաղման մարշի հնչիւնները մաղում սիրտ էին շարժում։ Վերջապէս երևաց թնդանօթատար սայլը, որի վրա դրված էր դագաղը։ Սայլի ետևից անմիջապէս գնում էր նոր թագաւոր Գէորգ V իր զաւակներով։ Սիրելի հօր մահը արտասուալում էր որդու տխուր և խորին վշտահար դէմքի վրա։ Կողքիս կանգնած մի մարդ լաց եղաւ։ Ես նայեցի և տեսայ մի բարձրահասակ սպիտակահեր ծերուկի, որը չէր կարողանում կանգնեցնել առատութեամբ հոսող արտասուքները։ Նա երեխայի նման լաց էր լինում։ Դագաղը ծածկված էր միացեալ կայսրութեան ազգային գոյներով։ Թագաւորի ետևից ընթանում էին նօրվէգիական և դանիական թագաւորները։ Ապա գնում էին պրինցները, անգլիական և օտար կոմսերը։ Վաղը թաղման հանդէսին կը մասնակցեն Եւրօպայի համարեա բոլոր թագաւորները և պրինցները։ Բոլոր օտար պրինցները և օֆիցէրները, անցնելով խոնարհեցրած դրօշակների տակով, զինուորական պատիւ էին տալիս անգլիական փառաւոր զօրքին։ Պէտք էր տեսնել հասարակութեան յուզմունքը, երբ նա տեսաւ ծովապետ լօրդ Զարլս Բէրկֆօրդին և նրա ետևից վայելչակազմ լօրդ Կիտչէնէրին անգլիական զօրքի ֆելդմարշալի համազգեստով, որ գնում էր Լօբէրտսի հետ։ Երկէկ ես տեսայ սպանական Ալֆոնս XIII թագաւորին, որ եկել է թաղմանը։

Վերջապէս հանդէսը մտաւ պալատը և Շօպէնի թաղման քայլերգի վերջին հնչիւնի հետ Ուէստմինստէրեան պալատի մռայլ կամարներն ընդունեցին Էդուարդ VII թագաւորի նշխարները։ Վերջին անգամ հնչեց ժամացոյցի զարկը։ Անգլիան հրաժեշտ տուեց իր սիրելի թագաւորին։ Ե. Ս.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Միքայէլեան մանէժում Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնայի և Մեծ Իշխաններ Բորիս և Անդրէյ Վլադիմիրովիչների ներկայութեամբ բացվեց երրորդ աւտոմօբիլների ցուցահանդէսը Ռուսաստանում։ Ցուցահանդիսի կոմիտէն շնորհաւորական հեռագիր ստացաւ ցուցահանդիսի Օգոստափառ հովանաւորող Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչից։

Սենատի քաղաքացիական վճռաբեկ ատեանը քննելով «Русское Знамя» թերթի խմբագիր-հրատարակիչ Դուբրովինի պահանջը ներքին գործերի մինիստրից և Պետերբուրգի քաղաքապետից՝ «Ռուսաց կեանքի և ժողովրդի արիւնի գինը» յօդուածի համար 3000 ր. տուգանքի ենթարկվելու առիթով, Դուբրովինի պահանջը մերժեց։

Առևտրի ներկայացուցիչների համագումարի խորհրդի շինութեան մէջ ինժենէր Էգիօրանկին ատրճանակով կրծքից վիրաւորեց ինժենէր Սրօկին, որից յետոյ ինքը ներկայացաւ քաղաքապետի դիւանատունը և յայտնեց դէպքի մասին։

ՍԱՄԱՐԱ։ Կիւչ գիւղում կարկուտը ոչնչացրեց մօտ 1500 դեսեատին հացահատիկ։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ։ Գերբային տուրքի օրինագիծը սէյմը ընդունեց երրորդ ընթերցումից յետոյ։ Այդ տուրքից եկամուտ սպասվում է $20^1/_2$ միլիոն մարկ։

ՄՕՍԿՎԱ։ Վեղարաւոր սենատոր Նէյդգարդը։

ՎԷՐՕՆԱ։ Օդաչու Պօլանը թռիչք կատարեց այստեղից մինչև Սօլֆէրինօ և վերադարձաւ։

ՎԻԵՆՆԱ։ Հօֆբուրգէրը դատապարտվեց կախաղանի։

ԲԵՐԻՆ։ Եկաւ չինական մի մանախումբ զինուորական գործի ուսումնասիրութեան համար։

ՊԷԿԻՆ։ Տեղումս են մի խումբ եապօնացի ճանապարհորդներ, որոնց մէջ են 12 յայտնի ֆինանսիստներ, որոնք ուսումնասիրում են Չինաստանի առևտրա-տնտեսական պայմանները։ Իշխանութիւնները և մամուլը սրտագին ընդունելութիւն են ցոյց տալիս եկածներին։

16 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երէկ կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Կայսերական թատրոնների օպերային դերասանուհի Կուզան։

Եկաւ բումինական պատգամաւորութիւնը, որ Օդեսայում այնքան սիրալիր ընդունելութեան հանդիպեց։

ՆՕՎԳՕՐՕԴ։ Այրվեց Պետրօվայի սղոցգործարանը։ Վնասները խոշոր են։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Խունխուզները երէկ կրակ բացին Վլադիմիրօ-Ալէքսանդրովսկօէ գիւղի վրա։ Կան վիրաւորներ չինացիներից և ռուսներից։ Աւազակները փախան։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Քաղաքում խօլերայով հիւանդ պառկած են 21, գաւառում 13, մեռած գաւառներում 60 մարդ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժէքդրերի կուրսերը

17 մայիսի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.	455 ր.	— կ.
II » » »	345 ր.	50 կ.
III Ադնւակ. բանկ. »	319 ր.	50 կ.
4% Պետական ընտա	91 ր.	$62^1/_2$ կ.
5% Պետ. Ազնւ. բանկ գր. թ.	100 ր.	25 կ.
$4^1/_2$% » » » »	95 ր.	75 կ.
4% » » » »	89 ր.	75 կ.
$3^1/_2$% » » » »	86 ր.	25 կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	100 ր.	$37^1/_2$ կ.
$4^1/_2$% » » » »	95 ր.	75 կ.
4% » » » »	89 ր.	75 կ.
5% Ներքին փոխառ. 1905 թ.		
I հրատ.	104 ր.	$37^1/_2$ կ.
5% » II հրատ.	104 ր.	$37^1/_2$ կ.
5% Արտաք. » 1906 »	104 ր.	25 կ.
5% » » 1908 »	104 ր.	50 կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	94 ր.	95 կ.
Բերլին 100 մարկ	— ր.	— կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր.	60 կ.
Թուրիզ 100 դրան	19 ր.	— կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8 ր.	66 կ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վլօրենցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—$12^1/_2$—$1^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^1/_2$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—$6^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան 6
103. 0—52

ԲԺՇԿԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Ամառը գտնվում է ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ (Կովկաս. հանք. ջրերում), որտեղ ընդունում է հիւանդներին մինչեւ սեպտեմբեր։ Верхній бульваръ, д. кн. Гирей.

(Ե. Հ. Կ.) 565. 0—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԻԳԻԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8

(Օ. Մ.) 564. 100—1

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՊԵԱՏԻԳՕՐՍԿ.

ուր ամառը կընդունէ հիւանդներին։

Սիֆիլիս, միզասեռական և վենեական հիւանդութիւններ։

(Ե. Հ. Կ.) 955. 100—92

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԴԻՄՈՂ ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ!

ԴՕԿՏՕՐ Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ

(Ասիստենցիս պրոֆ. ՍՏՐԱՍՍՄԱՆԻ եւ ԵՕԶԷՖԻ)

Ընդունում է ամեն տեսակ հիւանդների և առաջնորդում նրանց հմտապատասխան մասնագէտների մօտ։

Հասցէն՝ Berlin—Charlottenburg. Leibnizstr. 29.

(Ե. Հ. Կ.) 523. 5—4

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԴԱՀԼԻՃ

Վելիամինօվսկայա, № 7.

Շարունակվում է ընդունել ամեն տեսակ կահկարասիք թէ ծանելու և թէ պահելու համար։

539. 10—3

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» դասագրքի III հրատարակութիւնը թոյլատրված է Կովկասեան Ուսումնար. շրջանի Հոգաբարձուի կողմից՝ դպրոցներում գործադրելու համար։

Պատրաստ է տպագրութեան համար

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՆԱԽԱՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Թիֆլիսից 40 և 50 վ. հեռաւորութեան վրա (երկաթուղ. և խճուղ. հաղորդակցութիւն)

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐ

Դուշեթի գաւառում—Մշադիժվարի՝ 1523 դես. հանդերձ կալուածատիրական շինութեամբ։ Գորու գաւառում—Օկամի՝ 120 դես. և Շերտուլի՝ 208 դես։ Բօրչալուի գաւառում—Ֆախրալօ-Սարկինէտի՝ 1812 դես., և անտառ՝ 1830 դես.—կաղնի, հաճարի և բոխի ծառերով։

Մանրամասնութիւններ և այլ տեղեկութիւններ ըստ պահանջման։

Հասցէագրել՝ Ս.-Петербургъ, Мойка 81. Кн. А. И. Багратіону Мухранскому.

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում վաճառվում է.

ԱՐԱՔՍԵԱՆ

„ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ“

Ժողովածու Ա.

Բովանդակութիւն.—1) Թանգագին համբոյր. 2) Ցանկալին և անսպասելին. 3) Լուսանկարչական պատուհան. 4) Բարեյօնեան խառնակութիւն. 5) Աւետիս-աղա. 6) Շփոթված ծառայ։

Հրատ. «Գուտտենբերգի»։ Գինը պօստի ծախքով 1 ր.։

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ**», Ժողովածու Բ.

Բովանդակութիւն.—1) Գող. 2) Պաշտօնս է խոսփալ. 3) Զոքանչի գաւառաը. 4) Կրէչինակի իւբկայով. 5) Սիրահարված մայր. 6) Արեան դէպք։

Հրատար. «Գուտտենբերգի»։ Գինը պօստի ծախքով 1 ր.։

„ՀԻԴՐԱ“ ԴՐԱՄԱ 5 ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Թարգմ. Ֆրանս. Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Հրատար. «Գուտտենբերգի»։ Գինը պօստի ծախքով 50 կոպ.։

Գողի փոխարէն կարելի է ուղարկել մարկաներ։

Դիմել՝ Тифлисъ. Книжн. магаз. „Гутенбергъ“. Г. И. Галустяну.

№ 4870.

GESTE ALBERT SACHSS SCHUH-CREAM „BRISTOL“

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ

КОЛОССАЛЬНЫЙ

успѣхъ сапожн. крема

„БРИСТОЛЬ“

СОБЛАЗНЯЕТЪ поддѣлывателей.

ВНИМАНІЕ!

Настоящій только № 4370.

Альбертъ Заксъ

КОНТОРА: СПБ., Анг., пр. 43 телеф. 321—07.

РОЗН. МАГ.: Казанская 6, телеф. 264—92.

(П. 42934) 446. 10—8

АԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԺԻՐԱՐԴՕՎԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ

ԳԻԼԷԵՒ ԴԻՏՐԻԽ

Դվորցովայա փ. տ. Վրաց Ազնւականութեան, տելեֆօն № 145.

ԽԱՆՈՒԹԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Երկուշաբթի օրվանից, մայիսի 17-ից, մի շաբաթով

Նշանակվում է ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

Սեփական եւ արտասահմանեան ֆաբրիկաների ապրանքների

ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

(Կ.Ե.) 561. 2—2

Կովկ. Հայոց Բարեգ. Ընկերութեան գրասենեակում վաճառվում են Աւ. Պողոսեանի նուիրած հետեւեալ գրքերը.

1) Ս. Մեսրոպ, Լէօի	գինը 75 կոպ.
2) Իսքնակոչ իշխանը, Վիլհէլմ Հաուֆի	» 10 »
3) Փնջիկ, մանկ. երգ. եւրօպ. նօտան., Ա. Մանուկեանի	» 30 »
4) Պատմուածքներ կենդանիների կեանքից	» 40 »
5) Ժողովրդական պատմուածքներ, Ա. պրակ, Լ. Տօլստոյի	» 30 »
6) » » Բ. » » »	» 20 »

Հատով գնողներին 25% զեղչ, իսկ գումարով գնողներին առանձին պայման։ Թիֆլիսից դուրս պահանջվող գրքերի պօստի ծախքը Ընկերութիւնն իր վրա է վերցնում։

Դիմել՝ Тифлисъ, Абасъ-Абадская пл., д. соб., № 7.

(Հ. Կ. Ե.) 531. 3—3

Լ. Լեալեի լաբորատորիայի Օրլեան քաղաքում (Ֆրանսիա)

ԵՕԴԻՐԻՆ ԲԺՇԿԱՊԵՏ ԴԷՇԱՆԻ

(Iodhyrine du d-r Deschamp)

ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋՈՑ

ՁԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ

որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետևանքներով։ Բժշկապետ Դէշանի Եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. նրա ազդող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։

Բժշկապետ Դէշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար։

Հեռացնում է չաղութիւնը առտիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում։

Արկղիկի գինը, որ պարունակում է 60 դեղհատներ, արժէ 4 ր. 25 կոպ.։

Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում

Торговый Домъ ЛЮКСЕНБУРГЪ и К-о, Варшава, Журавья, 40.

(6,16,27,J.7,17) (В. 25331) 370. 5—5

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.